

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԵՆ ՌՈՒԲԵՆԻ ԱԶԱՏՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ XX ԴԱՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն»
մասնագիտությամբ ճարտարապետության դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

АЗАТЯН КАРЕН РУБЕНОВИЧ

**РАЗВИТИЕ ЖИЛИЩНОЙ АРХИТЕКТУРЫ ЕРЕВАНА В XX ВЕКЕ
В ПРОСТРАНСТВЕ И ВРЕМЕНИ**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
доктора архитектуры по специальности
18.00.01 – «Архитектура и архитектурный дизайн»

ЕРЕВАН 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում

Գիտական խորհրդատու՝

ճարտ. դոկտոր, պրոֆեսոր
Գ.Հ. ՌԱՇԻԴՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ճարտ. դոկտոր, պրոֆեսոր
Ա.Ա. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ
ճարտ. դոկտոր, պրոֆեսոր
Դ.Գ. ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ
ճարտ. դոկտոր, դոցենտ
Ա.Մ. ՇԱՀԻՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հունիսի 15-ին, ժամը 14.00-ին,

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈՀ-ի 030 «Ճարտարապետություն և շինարարություն» մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Տերյան փ. 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում:

Հասցեն՝ 0079, ք. Երևան, Մառի փ. 17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am

Սեղմագիրն առաքված է 2018 թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

ճարտ. թեկնածու, դոցենտ
Ա.Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ



Тема диссертации утверждена в Ереванском государственном университете архитектуры и строительства

Научный консультант:

доктор архитектуры, профессор
РАШИДЯН Г.Г.

Официальные оппоненты:

доктор архитектуры, профессор
АРУСТАМЯН А.А.
доктор архитектуры, профессор
КЕРТМЕНДЖЯН Д.Г.
доктор архитектуры, доцент
ШАГИНЯН С.М.

Ведущая организация: ОАО «АРМПРОЕКТ»

Защита состоится 15-го июня 2018 г. в 14.00 ч. на заседании специализированного совета 030 «Архитектура и строительство» ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении, по адресу: 0009, г. Ереван, ул. Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул. Марра, 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am

Автореферат разослан 15-го мая 2018 г.

Ученый секретарь специализированного совета:

кандидат архитектуры, доцент
ТОВМАСЯН С.А.



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտման թեմայի արդիականությունը: Ըստ Ա.Բուրովի, «... կացարանից է սկսվում ճարտարապետությունը, կացարանից է սկսվում քաղաքը ...»: Իսկ Լը Կորբյուզեն գտնում էր, որ չկա ավելի սուրբ գործ, քան կացարանի նախագծումն է: Այս անվանի վարպետների կարծիքով, հենց բնակելի կառուցապատումն է կանխորոշում ճարտարապետության նշանակությունը քաղաքի կերպարի ձևավորման գործընթացում:

Կացարանը մարդու կենսագործունեության գլխավոր պայմանն է: Հասարակության զարգացման գործընթացում տունն ընտանիքի հիմքն է, ընտանիքն էլ՝ կայուն պետության գրավականը: Ուստի կացարանի ապահովումը յուրաքանչյուր երկրի կարևորագույն սոցիալական խնդիրն է: Մյուս կողմից, կացարանը քաղաքի կառուցվածքի ձևավորման կայուն գործոնն է, և դրա ճարտարապետությունը մշտապես կարևոր տեղ է զբաղեցնում քաղաքաշինության գործընթացներում: Քաղաքի գործվածքի զգալի հատվածը ձևավորվում է հենց բնակելի կառուցապատմամբ: Այսպիսով, բնակելի ճարտարապետության ձևավորումը ժամանակի տարբեր պահանջներով պայմանավորված բարդ գործընթաց է, որտեղ արտացոլվում են ֆունկցիոնալ, գեղարվեստական, սոցիալական, տնտեսական բազմաթիվ գործոններ:

Սակայն, ժամանակն իր կնիքն է դնում քաղաքի ճարտարապետության վրա: Քաղաքը, որպես կենդանի օրգանիզմ, ժամանակի ընթացքում փոփոխվում է՝ կորցնում որոշ հատկություններ և ձեռք բերում նորերը: Փոփոխվում է նաև բնակելի կառուցապատումը: Հասարակության առաջընթացը պարբերաբար նոր խնդիրներ է առաջադրում բնակելի միջավայրին՝ պահանջելով կացարանի կազմավորման նոր լուծումներ: Հետևաբար, բնակելի կառուցապատումը մշտական արդիականացման կարիք է զգում, բնակելի ճարտարապետությունն էլ մշտապես ենթակա է հետազոտման, վերլուծության և զարգացման հեռանկարների կանխորոշման:

Այս ենթատեքստում բացառություն չէ նաև Երևանի բնակելի ճարտարապետությունը: Վերջին տասնամյակներում հանրապետությունում՝ նոր քաղաքական և սոցիալ-տնտեսական կառուցվածքի ձևավորմանը զուգահեռ, լուրջ փոփոխություններ է կրել նաև բնակելի շինարարության ոլորտը, որի սոցիալական պահանջարկը, սակայն, մնում է առաջնային խնդիր: Բնակելի կառուցապատումը շարունակում է կարևոր դեր ունենալ նաև Երևանի կերպարի ձևավորման գործընթացում: Կառուցապատման ներկայիս բուռն գործընթացները բարդ հիմնախնդիրներ են առաջադրում Երևանի քաղաքաշինությանը, և դրանց լուծման ճանապարհին առաջին քայլը պետք է լինի անցյալի փորձի վերաիմաստավորումը:

Առաջին հայացքից՝ Երևանի վերջին հարյուրամյակի ճարտարապետությանն ու կացարանին առնչվող հետազոտությունների պակաս չունենք: XIX դարի ճարտարապետությունն ուսումնասիրել և բնակելի կառույցներին անդրադարձել են Ն.Բունիաթյանը, Յու.Յարալովը, Ա.Վարդանյանը, Հ.Խալիպխյանը, Մ.Գասպարյանը և ուրիշներ: 1920-1950-ականների ճարտարապետության խնդիրները լուսաբանվել են Զ.Բախշինյանի, Հ.Մարգարյանի, Ռ.Ազիբեկյանի,

Լ.Բաբայանի, Վ.Հարությունյանի, Լ.Դոլուխանյանի, Մ.Հասարայանի, Է.Հարությունյանի և ուրիշների ուսումնասիրություններում: 1960-1990-ականների ճարտարապետությունն արտացոլվել է Մ.Թովմասյանի, Ա.Մելիքյանի, Արծ.Գրիգորյանի, Կ.Բայանի և ուրիշների աշխատանքներում: Զանգվածային բնակելի շինարարության հետազոտմամբ զբաղվել է ԲՄՀՈՒՍԱ ինստիտուտը: Այս ոլորտում ուսումնասիրություններ են կատարել Յու.Սաֆարյանը, Յա.Իսահակյանը, Մ.Միքայելյանը, Թ.Խաչատրյանը, Ա.Գրիգորյանը և ուրիշներ: Առանձնահատուկ է Գ.Ռաշիդյանի գործունեությունը, որը մասնագիտական գիտությունը լրացրել է բնակելի ճարտարապետության բազմակողմանի հետազոտություններով: Զանգվածային բնակելի շինարարության ուսումնասիրություններ են կատարվել ԽՍՀՄ-ի առաջատար գիտական կենտրոններում՝ ԸՈՒՅՊ շոկոլադ, ԸՈՒՅՊ ցածրաշենքեր, ԿիևՅՈՒՅՊ, ՄՈՒՅՊ, ԼենՅՈՒՅՊ և այլն: Բնակելի ճարտարապետության խնդիրների շուրջ առկա են մի շարք խորհրդային (Մ.Բարխին, Ա.Բուրով, Ա.Իկոննիկով, Լ.Կիսելնիչ, Վ.Կոսակովսկի, Բ.Ռոբանենկո, Մ.Լիսիցին, Ե.Պրոնին, Գ.Տիմոխով և ուրիշներ) և օտարերկրյա (Լը Կորբյուզե, Կ.Լինչ, Զ.Մակսի, Ու.Շրոդեր, Է.Յայդեր, Հ.Ադամչեսկա-Վեյսերտ, Բ.Ֆրեմպիլոն, Զ.Ֆորեսթեր և ուրիշներ) հեղինակների աշխատություններ:

Սակայն Երևանի վերջին հարյուրամյակի բնակելի ճարտարապետությունը, որպես աստիճանաբար զարգացման տրամաբանորեն հաջորդող փուլերի ամբողջություն, ճարտարապետական գիտության կողմից մինչ օրս չի ենթարկվել նման երկար ժամանակահատված ընդգրկող միասնական հետազոտության: Տարբեր փուլերին առնչվող աշխատություններն էլ հաճախ նվիրված են ճարտարապետության ընդհանուր խնդիրներին և կացարանին անդրադառնում են մասնակիորեն: Իսկ այսօր շատ փոփոխություններ են եղել, և այս տեսանկյունից Երևանի բնակելի ճարտարապետության անցած ուղին անհրաժեշտ է քննարկել այսօրվա դիրքերից՝ դիտելով ժամանակակից ճարտարապետության հիմնախնդիրների շրջանակում: Երբ հարյուրամյակի փորձը մեր առջև է, անցած ուղու առանձնահատկությունները տարբեր տեսանկյունից քննարկելու, վերլուծելու և արժևորելու լայն հնարավորություններ կան, ինչը կնպաստի ներկա փուլի խնդիրների լուծման որոնումներին: Սույն աշխատությունը նվիրված է այդ խնդիրների ուսումնասիրությանը:

Հետազոտության նպատակն է բացահայտել Երևանի բնակելի ճարտարապետության զարգացման օրինաչափությունները վերջին հարյուրամյակում և մշակել հետագա զարգացման համար գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ:

Հետազոտության խնդիրներն են.

1. համեմատել Երևանի և Խորհրդային Միությունում նույն ժամանակաշրջանում զարգացող այլ քաղաքների բնակելի ճարտարապետության զարգացման առանձնահատկությունները,
2. ուսումնասիրել Երևանի բնակելի ճարտարապետության զարգացման գործընթացի անցած ուղին վերջին հարյուրամյակում,

3. վերլուծել Երևանի գլխավոր հատակագծերի և բնակելի կառուցապատման փոխկապվածությունը՝ համեմատելով բնակչության և բնակելի ֆոնդի աճի նախատեսված և փաստացի տեմպերը,
4. բացահայտել Երևանի բնակելի ճարտարապետության ձևավորման վրա ազդող ներքին (բնակելի բջջի կազմակերպում) և արտաքին (կառուցապատման ձևավորում) գործոնների փոխազդեցությունը,
5. վեր հանել Երևանի բնակելի ճարտարապետության տիպաբանական օրինաչափությունները՝ ըստ կառուցապատման ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումների յուրահատկությունների,
6. դուրս բերել բնակելի բջջի կազմակերպման գործընթացում սանիտարահիգիենիկ պայմանների և հարմարավետության մակարդակի զարգացման բնութագրերը,
7. դասակարգել Երևանի բնակելի ճարտարապետության զարգացման ժամանակագրական փուլերը՝ ըստ ձևատեղծման և արտահայտման հատկանիշների,
8. ի հայտ բերել Երևանի ժամանակակից բնակելի ճարտարապետության զարգացման առանձնահատկությունները,
9. բացահայտել նոր սոցիալ-տնտեսական պայմաններում բնակելի ճարտարապետության ձևավորման դրական և բացասական կողմերը,
10. մշակել գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ՝ Երևանի բնակելի ճարտարապետության հետագա զարգացման համար:

Հետազոտության առարկան Երևանի բնակելի ճարտարապետությունն է:

Հետազոտության սահմաններն ընդգրկում են Երևանի ողջ տարածքը XX դարի սկզբից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում:

Աշխատության մեթոդաբանությունը հիմնված է թեմայի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան գիտական գրականության հետազոտման, գրաֆիկական, արխիվային, քարտեզագրական նյութերի վերլուծության, բնօրինակային ուսումնասիրությունների, հետազոտության գիտական մեթոդների կիրառման (համակարգային վերլուծություն, ընդհանրացում, դասակարգում), համակարգչային ծրագրերի օգտագործման (ArchiCad, Adobe Photoshop, Adobe Acrobat, Microsoft Office) վրա:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ՝

- միասնական ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել Երևանի վերջին հարյուրամյակի բնակելի ճարտարապետության զարգացման ողջ գործընթացը և դրա ձևավորման վրա ազդող գործոնները,
- բացահայտվել են Երևանի գլխավոր հատակագծերի և բնակելի կառուցապատման փոխկապվածության առանձնահատկությունները,
- դասակարգվել են Երևանի բնակելի ճարտարապետության զարգացման ժամանակագրական փուլերը,
- վեր են հանվել նոր սոցիալ-տնտեսական պայմաններում բնակելի ճարտարապետության ձևավորման դրական և բացասական կողմերը,

- մշակվել են գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ Երևանի բնակելի ճարտարապետության հետազա զարգացման համար:

Հետազոտության գործնական արժեքն ու կիրառական նշանակությունը կայանում են նրանում, որ արդյունքները կարող են օգտագործվել հետևյալ բնագավառներում՝

- բնակելի շենքերի, համալիրների և անհատական տների նախագծում,
- բնակելի կառուցապատման արդիականացում և վերակառուցում,
- Երևանի նոր գլխավոր հատակագծի և վարչական շրջանների առանձին տարածքների գոտևորման նախագծերի մշակում,
- մասնագիտական կրթության շրջանակում բնակելի ճարտարապետությանը նվիրված դասախոսությունների ծրագրերի կազմում:

Հետազոտության արդյունքները ներդրվել են հրատարակված 32 գիտական հոդվածներում, 2009-2017 թթ. ընթացքում ՃՀՀԱՀ-ի գիտական գործընթացներում և, մասնավորապես, «Ճարտարապետական նախագծում և ճարտարապետական միջավայրի դիզայն» ամբիոնում կատարված զեկուցումներում, ՃՀՀԱՀ-ում կատարվող պետքույզեից ֆինանսավորվող «Երևանի բնակելի ճարտարապետության զարգացման հիմնախնդիրները» գիտական թեմայի մշակումներում, հեղինակի կողմից իրականացված բնակելի կառույցների նախագծերում:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը պայմանավորված են դիտարկված հարցերի հաջորդականությամբ և հետազոտման խնդիրներով: Ատենախոսությունը բաղկացած է հիմնական մասից և հավելվածից: Հիմնական մասը ներառում է ներածություն, չորս գլուխներ, եզրակացություններ և հանձնարարականներ, գրականության ցանկ (135 անուն), որոնց ընդհանուր ծավալը կազմում է 233 էջ: Հավելվածը կազմված է 57 էջից, որտեղ բերված են գծագրեր, լուսանկարներ, սխեմաներ, գրաֆիկներ, աղյուսակներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ձևակերպվում են հետազոտման նպատակն ու խնդիրները, ներկայացվում են աշխատության սահմանները, մեթոդիկան, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Գլուխ I-ը՝ «Բնակելի ճարտարապետության զարգացման առանձնահատկությունները կայացման շրջանում (1920-1956 թթ.)» նվիրված է կացարանի ճարտարապետության աստիճանաբար զարգացման բնորոշ հատկանիշների բացահայտմանը 1920-ականների սկզբից մինչև 1950-ականների կեսն ընկած ժամանակաշրջանում:

Գլխի սկզբում պատմական ակնարկի ձևով ներկայացվում է բնակելի ճարտարապետության ընդհանուր բնութագիրը XIX-XX դարերի սահմանագլխին: Լուսաբանվում են քաղաքի կառուցվածքի, քաղաքաշինական գործընթացների և ֆունկցիոնալ բաղադրիչների առանձնահատկությունները, կատարվում է բնակելի

տան կառուցվածքային վերլուծության վրա հիմնված կացարանի ճարտարապետության ընդհանրացված ուսումնասիրություն:

XX դարի սկզբին քաղաքի կառուցվածքի և բնակելի կառուցապատման հետազոտության արդյունքում պարզվում է, որ բնակելի ճարտարապետության զարգացումն այս շրջանում պայմանավորվում է քաղաքի կառուցվածքի կարգավորման գործընթացով՝ նոր փողոցների բացում և դրանց ցանցի կանոնավորում, շենքերի տեղադրում կարմիր գծերով, նախագծման և շինարարության գործընթացների կանոնակարգում:

XIX-XX դարերի սահմանագլխին կառուցված որոշ անհատական տների և բնակելի շենքերի (*Աբովյան 1; 3, Տիգրան Մեծ 11*) օրինակների հիման վրա ներկայացվում են բնակելի կառույցների հիմնական տիպաբանական խմբերը (անհատական տներ, բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ-բնակելի շենքեր): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ XIX-XX դարերի սահմանագլխին տեղի է ունենում քաղաքի կառուցվածքում բնակելի միավորի փոփոխություն: Անհատական տանը զուգահեռ ծավալվում է մատչելի կացարան առաջարկող բազմաբնակարան շենքերի շինարարությունը: Քննարկվում են նաև ֆունկցիոնալ այլ տարրեր ներառող բնակելի շենքերի ճարտարապետության խնդիրները: Բացահայտվում է, որ բնակելի ճարտարապետության հիմքում ժողովրդական տան տարածահատակագծային համակարգն է, որն աչքի է ընկնում ներքին բակի շուրջ տարածքների խմբավորման կառուցվածքով (փողոցի կողմում՝ բնակելի հատված, կողային թևերում՝ օժանդակ սենքեր): Բնակելի կառույցների հատակագծային համակարգը սրահային է: Տարածքները կապվում են բակի կողմից տեղադրված պատշգամբով:

Դուրս են բերվում ավանդական տան գլխավոր բնորոշիչները՝ սոցիալական հագեցած միջավայրն ու բնության և ճարտարապետության փոխկապվածությունը: Սոցիալական կապերի զարգացած մակարդակը վեր է հանվում հորինվածքային-ֆունկցիոնալ միջուկի՝ ներքին բակի և դրան կից պատշգամբի տարածությունում: Բնության միջոցների կիրառումը դիտարկվում է տան միկրոկլիմայի ապահովման լուծումներում (արևային կողմնորոշում, միջանցիկ օդափոխություն, ջերմաֆիզիկական բարձր հատկությամբ բնական նյութերի կիրառություն):

Ընդհանրացման արդյունքում վեր են հանվում Երևանի XX դարի սկզբի բնակելի ճարտարապետության հետևյալ բնորոշ առանձնահատկությունները:

- Բնակելի գոտու փողոցային ցանցը ձևավորվում է գոյություն ունեցող և նոր բացվող ուղղություններով՝ հատակագծման շառավղաօղակային և ուղղանկյուն սխեմաների համադրությամբ: Փողոցների հորինվածքի առաջնային պայման է դառնում պարագծային կառուցապատման սկզբունքը, որտեղ բնակելի շենքերը տեղադրվում են փողոցների կարմիր գծի վրա:

- Տեղի է ունենում բնակելի կառուցապատման միավոր տարրի փոփոխություն: Անհատական տանը զուգահեռ զարգանում է բազմաբնակարան շենքերի շինարարությունը, որոնք նպաստում են բնակելի ֆոնդի աճին և նոր մասշտաբ են հաղորդում քաղաքային տարածությանը:

- Բնակելի կառույցների ճարտարապետահատակագծային լուծումներում ակնհայտ են բնակլիմայական միջավայրի ազդեցությունն ու ժառանգական կապը

ավանդական տան հետ: Շենքերի կառուցվածքը բնորոշվում է ավանդականին զուգահեռ նորարարական համակարգերի ներմուծմամբ:

- Կացարանի տարածական համակարգը ձևավորվում է սրահային սխեմաների վրա հիմնված պարփակ հորինվածքով՝ տարածքների ներքին բակի շուրջ խմբավորմամբ:

- Բնակելի շենքերի արտաքին ճարտարապետությունը՝ հիմնված ռուսական դասական ոճերի յուրատեսակ մեկնաբանության վրա, դառնում է քաղաքի գեղարվեստական կերպարի ձևավորման գլխավոր միջոցներից մեկը:

Գլխի հաջորդ մասում ուսումնասիրվում են քաղաքային բնակելի ճարտարապետության ձևավորման նախադրյալները 1920-1930-ականներին: Ընդհանրացվում են քաղաքային կառուցվածքի և կառուցապատման զարգացման խնդիրները, կատարվում է միահարկ տներից մինչև միջին հարկայնության բազմաբնակարան շենքերի ու համալիրների ձևավորման գործընթացի վերլուծություն, պարզաբանվում են բնակելի ճարտարապետության ոճական ուղղություններն ու գեղարվեստական առանձնահատկությունները:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Երևանում բնակելի ճարտարապետության բուռն զարգացումն այս շրջանում կապվում է պետականության վերականգնման և հատկապես՝ ՀԽՍՀ-ի ձևավորման հետ, երբ նոր սոցիալ-տնտեսական իրականությունն ու հասարակական կառուցվածքը բերում են մշակութային արժեքների վերածնության: Ծավալվում են քաղաքի արմատական վերակառուցման և սոցիալական բնակելի ֆոնդի ձևավորման պետական գործընթացները:

Ուսումնասիրվում են 1924-ի գլխավոր հատակագիծը, քաղաքի տարածական և ֆունկցիոնալ զարգացման միտումները: Բացահայտվում է, որ նախագծի հիմքում դրված հիմնական գաղափարը՝ քաղաքի միասնական ճարտարապետական օրգանիզմի ձևավորումը, անմիջականորեն անդրադառնում է բնակելի կառուցապատման վրա: Քաղաքի ֆունկցիոնալ ինտեգրված կառուցվածքում կացարանի համատարած ներդրման արդյունքում բնակելի շենքերը վերածվում են կառուցապատման միավոր մասնիկների և կարևոր նշանակություն ստանում քաղաքի կերպարի ձևավորման գործընթացում:

Դուրս են բերվում քաղաքի կառուցապատման չափորոշիչները (3-4-հարկանի պարագծային կառուցապատում), բնակչության և բնակելի ֆոնդի աճի ցուցանիշները (1944-ին բնակչությունը կանխատեսվում է 150'000): Դա վկայում է, որ նախատեսվում է քաղաքի 150 % աճ (1924-ին քաղաքի բնակչությունը՝ 60'000):

Ներկայացվում է բնակչության կանխատեսված աճի խախտման (1935-ին՝ 150'000) հետևանքով քաղաքի շրջակա բնակավայրերին միաձուլման խնդիրը, ինչը բերում է «Մեծ Երևան» նոր գլխավոր հատակագծի մշակմանը (1935-1939 թթ.): Քննարկվում են տնտեսական որոշակի հաշվարկների վրա հիմնված քաղաքի կառուցվածքի զարգացման, տարածքային ընդլայնման, կառուցապատման հաջորդականության, կանաչապատման միջոցառումներին առնչվող հարցերը:

Շոշափվում են մայրաքաղաքային նշանակության հորինվածքային կենտրոնների և արտերիաների՝ հրապարակների ու գլխավոր փողոցների ձևավորման խնդիրները, Երևանի քաղաքաշինական կառուցվածքի հիմքում դրված

անսամբլային ճարտարապետության և այդ գործընթացում բնակելի շենքերի նշանակության հարցերը: Բացահայտվում է, որ քաղաքի ֆունկցիոնալ ինտեգրված կառուցվածքում կացարանի համատարած ներդրման արդյունքում բնակելի շենքերը վերածվում են քաղաքի գործվածքի ֆունկցիոնալ տարրերն ընդհանուր համալիրում միավորող, փողոցի հագեցած միջավայրն ապահովող և ինքնուրույն անսամբլներ ձևավորող կառույցների: Վեր են հանվում բնակելի կառուցապատման թաղամասային-պարագծային մոդելի և ավանդական բակի տարածական համակարգի նոր մասշտաբում ձևափոխության խնդիրները:

Պարզաբանվում է ԽՍՀՄ-ում բնակելի շինարարության բարելավման նոր պահանջների ազդեցությունը Երևանի բնակելի ճարտարապետության վրա: Տեստեսական և սոցիալ-հոգեբանական գործոնների տեսանկյունից հետազոտվում է կենցաղի հասարակայնացման կոմունալ բնակեցման սկզբունքի ներդրման հարցը:

Լուսաբանվում է եվրոպական և խորհրդային ճարտարապետության մեջ տարածված, ժամանակաշրջանին բնորոշ ռացիոնալիզմի հայացքներ զարգացնող կոնստրուկտիվիզմի արտահայտությունը Երևանի բնակելի կառուցապատման մեջ: Բացահայտվում է, որ ոճական այս ուղղությանը հարող ճարտարապետների ստեղծագործություններում առաջնային նշանակություն է տրվում տեղական պայմաններին, ինչն էլ բերում է Երևանի կոնստրուկտիվիզմի ինքնատիպությանը:

1920-30-ականներին կառուցված մի շարք շենքերի օրինակների (*Նայրանդյան 17; 23; 41; 43, Հանրապետության 62; 80; 85, Արվյան 19; 23; 29; 32, Վարդանանց 7, Մաշտոց 20; 23; 30; 35; 44; Զաքիյան 1, Պարոնյան 5, Պուշկին 25, Չեխով 23, Տիգրան Մեծ 63; 65; 69*) ուսումնասիրության հիման վրա քննարկվում և վերլուծության են ենթարկվում՝

- 1920-աններին անցյալի կառուցվածքը կրկնող միահարկ, փոքր ծավալի բնակելի շենքերի ճարտարապետությունը և սակավահարկ շինարարության գործընթացում հայրենադարձության ազդեցության գործոնը,

- միջին հարկայնության բազմաբնակարան շենքում ավանդական կառուցվածքի ձևափոխության, տան տարածական համակարգի խտացման, ամառային տարածքների ձևափոխության խնդիրները, հատակագծման անկատարության պատճառները,

- բնակելի շենքի բացարձակ չափերի աճին նպաստող նախագծման նոր ստանդարտներն ու շինարարության կատարելագործման միջոցները,

- ընդգրկուն բնակելի համակարգերի գաղափարների հիման վրա ստանդարտ տարրերով կառուցապատված խոշոր համալիրների ձևավորման յուրահատկությունները, կենտրոնում փողոցների որոշակի հատվածների միասնական կառուցապատման համալիրներին և անսամբլային ճարտարապետությանն առնչվող խնդիրները,

- բնակելի ճարտարապետության գեղարվեստական ուղղությունները:

Վեր են հանվում Երևանի 1920-1930-ականների բնակելի ճարտարապետության հետևյալ բնորոշ առանձնահատկությունները:

- Բնակելի ճարտարապետության զարգացման նոր փուլը պայմանավորվում է քաղաքի արմատական վերակառուցմամբ, որի հիմքում դրվում են ֆունկցիոնալ-

ինտեգրված քաղաքային համալիրի և անսամբլային ճարտարապետության ստեղծման գաղափարները:

- Անհատ սեփականության շահերից բխող շինարարությունը տեղը զիջում է սոցիալական բնակելի ֆոնդի ձևավորման գործընթացին:

- Բնակելի կառուցապատումը ենթարկվում է քաղաքի նոր մասշտաբին և հորինվածքային սկզբունքներին: Տարածությունը ձևավորվում է փողոցային-պարագծային կառուցապատմամբ: Դրա հիմքում ավանդական բնակելի միջավայրի կազմակերպման գլխավոր միջոցն է՝ բակը, որի տարածական համակարգը ձևափոխվում է նոր մասշտաբում:

- Բնակելի կառույցների տիպոլոգիական զարգացումը բնորոշվում է աննախադեպ դինամիկայով՝ միահարկ տներից մինչև 3-4-հարկանի բազմաբնակարան շենքեր և ստանդարտ տարրերով կառուցապատված խոշոր համալիրներ: Համակարգի ընդլայնման միտումը կենտրոնում արտահայտվում է փողոցների որոշ հատվածների միասնական կառուցապատմամբ:

- Միջին հարկայնության շենքերում ավանդական սրահաձև կառուցվածքը ձևափոխվում է սեկցիոնի: Բնակելի բջջի զարգացումն աչքի է ընկնում տան տարածական համակարգի խտացմամբ և բակից կենցաղային գործընթացների բնակարան տեղափոխմամբ:

- Բնակելի ֆոնդի սղությունն ու կենցաղի հասարակայնացման նոր գաղափարները բերում են կոմունալ բնակեցման սկզբունքի համատարած ներդրմանը:

- Ճարտարապետության գեղարվեստական կողմը բնորոշվում է զարգացման երկու ուղղություններով: Առաջինը՝ հին քաղաքի ոճական հատկությունների զարգացման վրա հիմնված դասական ժառանգության վերափմաստավորումն է: Երկրորդը՝ համաշխարհային ճարտարապետության մեջ տարածված կոնստրուկտիվիզմը: Հակասական սկզբունքների համատեղ զարգացումը բացատրվում է պետականության վերականգնման շրջանում նոր ոճերի փնտրումներով, ինչպես նաև մասնագետների ավագ և երիտասարդ սերունդների ստեղծագործական տարածայնություններով:

- Բնակելի ճարտարապետության զարգացման վրա էական ազդեցություն է թողնում շինարարական նյութերի և տեխնոլոգիաների առաջընթացը: Անցյալի կրող քարե պատերով և փայտե ծածկերով համակարգը համալրվում է բետոնի կիրառությամբ և շինաշխատանքների որոշակի մեխանիզացմամբ, ինչը նպաստում է շենքերի ծավալի խոշորացմանն ու թույլ տալիս նվազեցնել շինարարության ժամկետները:

Գլխի հաջորդ մասում քննարկվում են բնակելի ճարտարապետության զարգացման յուրահատկությունները հետպատերազմյան տարիներին: Կատարվում է 1940-50-ական թվականների բնակելի ճարտարապետության համալիր հետազոտություն, վերլուծության են ենթարկվում դրա ձևավորման քաղաքաշինական, հորինվածքային, հատակագծային և գեղարվեստական նախադրյալները:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ բնակելի ճարտարապետության զարգացման գործընթացում 1930-ականների վերջին տեղի ունեցող փոփոխությունները կապվում են երկու հիմնական գործոնների հետ:

Առաջինը գեղարվեստական կողմի զարգացումն է, երբ հաղթանակով ոգեշնչված ազգային մշակույթի վերելքի գաղափարներն արտացոլվում են ստեղծագործական նոր որոնումներում: Երկրորդը՝ բնակչության արագ աճի պայմաններում բնակելի շինարարության տեմպի ընդլայնումն է, որը պահանջում է շենքերի ծավալի մեծացում և կառուցման արագության խթանում:

1940-ականներին քաղաքի և բնակելի կառուցապատման զարգացման համատեղ հետազոտությունը թույլ է տալիս վեր հանել կենտրոնի և նոր շրջանների անհամաչափ զարգացման միտումները: Դրանցից առաջինը կենտրոնի փողոցների ամբողջական վերակառուցումն է, որտեղ ամրապնդվում է քաղաքաշինական անսամբլների ձևավորման գաղափարը (դիտարկվում է Մաշտոց, Տիգրան Մեծ, Սայաթ-Նովա, Մոսկովյան, Տերյան, Ամիրյան, Թումանյան փողոցների օրինակով): Երկրորդը՝ կենտրոնի և նոր շրջանների միջև հորինվածքային կապերի անհստակությունը (դիտարկվում է Բաղրամյան փողոցի սակավահարկ, առանձին կառուցապատման օրինակով):

1951-ի գլխավոր հատակագծի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հանդիսանում է «Մեծ Երևան»-ի վերամշակված տարբերակը: Դրա անհրաժեշտությունը կապվում է պատերազմից հետո քաղաքի կառուցվածքի զարգացման նոր պահանջների առաջացման հետ: Ուսումնասիրությունը թույլ է տալիս դուրս բերել նախագծի հիմնական բնութագրերը՝ քաղաքի զարգացման ուղղությունները (հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք, Հրազդանի հունի երկայնքով), բնակչության աճի կանխատեսումները (1965-ին՝ 450'000), կառուցապատման արդյունավետության բարձրացման միջոցառումները (շենքերի հարկայնությունը նախատեսվում է 5-6-հարկ):

Կատարվում է քաղաքի բնակելի ֆոնդի աճի տեմպերի վերլուծություն և համեմատություն Խորհրդային Միությունում նույն տարիներին զարգացող այլ քաղաքների ցուցանիշների հետ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս ցուցանիշով Երևանը գտնվում է զարգացման միջին մակարդակում (1920-1956 թվականների ընթացքում կառուցվել է. Երևան – 1.13, Նովոսիբիրսկ – 1.65, Չեյպիբինսկ – 1.83, Կրասնոյարսկ – 0.75, Օմսկ – 0.49 մլն. ք.մ. բնակելի մակերես):

Քննարկվում են կենտրոնի կառուցապատման մեջ գեղարվեստական ուղղության զարգացման և պողոտաների համալիր կառուցապատման գործընթացում քաղաքաշինական ընդհանուր գաղափարի ամրապնդման խնդիրները:

Լուսաբանվում է XIX-XX դարերի սահմանազլխին ազգային արժեքների վերածնության համաշխարհային այլքի Հայաստանի մշակութային գործընթացներում արտացոլման երևույթը 1940-ականների կեսին: Ընդհանրացվում են գործընթացի դրսևորումներն անկախություն ձեռք բերած և կառավարման համակարգի փոփոխություն կրած պետություններում (Ֆինլանդիա, Ճապոնիա, Նիդերլանդներ, Բելգիա, Իսպանիա): Հետազոտությունն ակնհայտ է դարձնում, որ Հայաստանում ազգային ճարտարապետության մոտիվների զարգացումը պայմանավորվում է ինչպես պետականությունը վերականգնած հասարակության սոցիալ-հոգեբանական պահանջներով, այնպես էլ 1930-ականների վերջից ԽՍՀՄ-

ում պետականորեն պահանջվող դասական ժառանգության յուրացման ուղղության աստիճանաբար դեպի ազգայինը շեղումով:

Պարզաբանվում է սոցիալ-իզոբանական և տնտեսական գործոնների անհամատեղելիության խնդիրը, որը երկարաձգում է սակավ արդյունավետ դասական մոդելներով կառուցապատման գործընթացը: Բնակելի շենքերի ճարտարապետության առջև դրված տեխնիկատնտեսական պահանջների ուսումնասիրության արդյունքում բացահայտվում է նախագծման և շինարարության կատարելագործման անբավարար մակարդակը:

1930-ականների վերջին և 1940-1950-ականներին կառուցված տարբեր շենքերի (*Մաշտոց 1; 2; 4; 9; 41; 43; 45; 47; 48; 50; 54, Տիգրան Մեծ 10; 16; 65; Թումանյան 9; 15; 35, Տերյան 42; 61, Ամիրյան 3; 5, Բաղրամյան 1; 2, Կիկյան 1-17; Դեմիրճյան 49, Մոսկովյան 33, Արուսյան 34, Սայաթ-Նովա 3*) ուսումնասիրության հիման վրա քննարկվում և վերլուծության են ենթարկվում՝

- անսամբլային կառուցապատման խնդիրները, սակավահարկ բնակելի շինարարության ձևավորման նախադրյալներն ու ազդեցությունը քաղաքի կառուցապատման վրա,

- պարագծային կառուցապատման շենքերի քաղաքաշինական նշանակության մոդելները (շարքային, անկյունային, շեշտված և համալիր նշանակության),

- բնակելի շենքերի հորինվածքի և պարագծային կառուցապատման տարբեր ճակատների ձևավորման գործընթացը, գլխավոր ճակատների ձևավորման լուծումներն ու դրանց բնութագրերը,

- բազմաֆունկցիոնալ կառուցվածքի ազդեցությունը շենքերի հատակագծային և գեղարվեստական լուծումների, ինչպես նաև քաղաքային միջավայրի վրա,

- սեկցիոն, հատակագծային բարդ ուրվագծի շենքերի հատակագծային կառուցվածքի ձևավորման նախադրյալները, դրանց ազդեցությունը բնակելի բջջի լուծումների ձևավորման վրա, կացարանի հատակագծմանը, տեսակին, կազմին, սանիտարական պահանջներին առնչվող խնդիրները, բնակարանի ֆունկցիոնալ գոտևորման սխեման և դրա հիմնական բնութագրերը,

- ազգային ճարտարապետության վերածնման համաշխարհային ալիքի դրսևորման երևույթները Հայաստանի մշակութային գործընթացներում,

- ճարտարապետության վրա պետական գաղափարախոսության ազդեցության հարցը, պահանջված դասական ժառանգության փոխարեն ազգայինի յուրացման գործընթացի հանգամանքներում ձևավորված միասնական ոճը և դրա քաղաքային համալիրի կերպարի ձևավորման գործընթացում ունեցած նշանակությունը:

Վեր են հանվում Երևանի 1940-1950-ականների բնակելի ճարտարապետության հետևյալ բնորոշ առանձնահատկությունները:

- Բնակելի ճարտարապետության զարգացման նոր փուլը պայմանավորվում է քաղաքային միջավայրի գեղագիտության առաջնայնությամբ, որը մարմնավորվում է գլխավոր ճակատների լուծումներում:

- Զարգացման գազաթնակետին է հասնում անսամբլային ճարտարապետությունը՝ արտահայտված գլխավոր փողոցների համալիր կառուցապատման գործընթացում: Տարածական կապ ստեղծելով խոշոր հասարակական կառույցների միջև և

ենթարկվելով ընդհանուր քաղաքաշինական գաղափարին՝ փողոցները ձևավորող բնակելի անսամբլները հագեցնում են քաղաքի կերպարի արտահայտչությունը:

- Հասարակական սպասարկման համակարգի կառուցապատման առաջին հարկում համատարած ներդրումը հանգեցնում է բնակելի շենքի բազմաֆունկցիոնալ կառուցվածքի ձևավորմանը:

- Բնակելի շենքերի կառուցվածքը ենթարկվում է դասական հորինվածքների բնորոշ դասակարգման (պարագծային կառուցապատման մեջ ի հայտ են գալիս հորինվածքային տարբեր նշանակության շենքեր):

- Պարագծային կառուցապատման գոտիներում գոյություն ունեցող բնակելի ֆոնդի իրացման բարդությունները նպաստում են փողոց-միջանցքների ձևավորմանը՝ էական կոնտրաստ առաջացնելով բնակելի գոտու ներքին և արտաքին միջավայրերի միջև:

- Գեղարվեստական լուծումները բնորոշվում են կանոնավորմամբ: Հասարակական և պետական հակասական պահանջների ներգործությամբ ձևավորված, ազգային և դասական ավանդույթների վրա հիմնված միասնական ոճը ինքնատիպություն է հաղորդում Երևանի կերպարին և ստեղծում պատմականության պատրանք՝ էնդոգենալ ամուր կապ հաստատելով բնակչության հետ:

- Կացարանի ներքին համակարգն աչքի է ընկնում անկատարությամբ: Քաղաքի կառուցվածքից բխող հատակագծման բարդ ուրվագծով շենքերի ներքին լուծումների կախվածությունն արտաքինից բերում է բնակելի բջջի ֆունկցիոնալ կազմակերպման խնդիրների (թերի գոտևորում, անցումային սենյակներ, սենքերի անհամաչափություն):

- Շենքերի կառուցվածքում պահպանվում են անցյալի ժամանակատար սկզբունքները: Երկաթբետոնի ներդրումն ու քարի մշակման մեխանիկացումն էականորեն չեն ազդում շինարարության տեմպի վրա: Պլաստիկ հագեցած ճակատների իրագործումը երկարացնում է գործընթացի ժամկետներն ու զգալիորեն ավելացնում դրա արժեքը:

Գլուխ II-ը՝ «Բնակելի ճարտարապետության զարգացումը զանգվածային շինարարության տարիներին (1957-1991 թթ.)» նվիրված է Երևանի բնակելի ճարտարապետության առանձնահատկությունների հետազոտությանը զարգացման ամենաբուռն շրջանում՝ 1950-ականների երկրորդ կեսից մինչև 1991 թվականը:

Գլխի սկզբում ուսումնասիրվում են 1950-ականների երկրորդ կեսից մինչև 1960-ականների վերջն ընկած ժամանակաշրջանում քաղաքի զարգացման խնդիրները, հին և նոր գոտիներում կառուցապատման մոտեցումները, տիպային նախագծման սկզբունքները, կատարվում է կացարանի նախագծման գործընթացում ճարտարապետության փոխկապակցված հարցերի ընդհանրացում, վեր են հանվում բնակելի ճարտարապետության գեղարվեստական յուրահատկությունները:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ բնակելի ճարտարապետության զարգացման միանգամայն նոր շրջան մտնելը 1950-ականների երկրորդ կեսին կապվում է զանգվածային շինարարության գործընթացի ներդրման հետ, երբ կացարանի ճարտարապետության մեջ գլխավոր նշանակություն է ձեռք բերում

ստանդարտացումը, իսկ գեղագիտությունը տեղը զիջում է տնտեսական նպատակահարմարության պահանջներին:

Քաղաքի տարածքային ընդլայնման ուսումնասիրությունը վկայում է, որ այն տեղի է ունենում անհամաչափորեն: 1950-ականների սկզբին շարունակվում է ինտենսիվորեն կառուցապատվել կենտրոնը, իսկ ավարտին բնակելի շինարարությունը գրեթե լիովին տեղափոխվում է նոր գոտիներ: Դա բացատրվում է 1951-ի գլխավոր հատակագծի և զանգվածային շինարարության անցման ժամանակագրական անհամատեղելիությամբ: Նման անհամաչափությունն ազդում է կառուցապատման հորինվածքային լուծումների վրա: Նոր շրջաններում կառուցապատման ազատ համակարգերի ներդրումը հակասում է գլխավոր հատակագծի դասական-պարագծային հորինվածքներին: Տեղի է ունենում քաղաքի կառուցվածքում կենտրոնի տարանջատում, ինչը ուղեկցվում է կառուցապատման հակասական մոդելների փոխազդեցությամբ (կենտրոնում՝ ազատ, նոր շրջաններում՝ պարագծային կառուցապատման սկզբունքների կիրառում):

Բացահայտվում է, որ կառուցապատման հին և նոր սկզբունքների հակասության պատճառ են հանդիսանում նաև ստեղծագործական ուղու փոփոխության բարդությունները, որոնք հանգեցնում են կենտրոնի զարգացման անորոշության, բազմահարկ շինարարության նախաձեռնության և ավանդական քաղաքաշինական միջավայրի վրա դրանց համապատասխան ազդեցության:

Ներկայացվում են զանգվածային բնակելի շինարարության գործընթացի ձևավորման և կացարանի տիպայնացման նախադրյալները, նախագծման ավանդական սկզբունքների արմատական փոփոխության պահանջները, դրանց արագ յուրացման հնարավորությունները:

Համաշխարհային ճարտարապետության մեջ իդեալիստական գաղափարների ազդեցության ներքո տասնամյակներ առաջ ծագած բնակելի կառուցապատման ազատ հորինվածքներին առնչվող խնդիրների քննարկումը եվրոպական և հյուսիսամերիկյան քաղաքների օրինակներով պարզ է դարձնում, որ կառուցապատման բաց հնարքները բնակելի միջավայրում սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրներ են առաջացնում իրականացման հենց առաջին տարիներից: Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, սակայն, որ Երևանում 1960-ականներին կառուցապատման այս մոդելներն իրագործելիս համապատասխան ուսումնասիրության չի ենթարկվում կուտակված համաշխարհային փորձը, ինչի արդյունքում նույն խնդիրներն ի հայտ են գալիս նաև Երևանում:

1950-ականների վերջին և 1960-ականներին ձևավորված նոր բնակելի շրջանների (*Աջափնյակ, Նոր-Նորք, Ջեյթուն, Շենգավիթ, Արարապյան*), կառուցապատման մեջ կիրառված տիպային նախագծման (*1-451Մ, 1A-450, A1-454 սերիաներ, ծածկերի բարձրացման մեթոդով և շրջանակակարկասային համակարգով իրականացվող բարձրահարկեր*) և անհատական նախագծման շենքերի (*Աբովյան 11; 13; 26; 28, Նալբանդյան 19, Սայաթ-Նովա 4/1*) ուսումնասիրության հիման վրա քննարկվում և վերլուծության են ենթարկվում՝

- նոր բնակելի շրջանների կառուցապատման տիպային նախագծերի առաջին 4-5-հարկանի շենքեր ներառող սերիանների և առաջին բազմահարկերի ճարտարապետության առանձնահատկությունները,

- կառուցապատման ազատ գոտիներում ստեղծվող զանգվածային շինարարության առաջին խոշոր բնակելի գոյացությունների ձևավորման նախադրյալներն ու ճարտարապետության խնդիրները,

- կենտրոնական միջուկի կառուցապատման մեջ գեղարվեստական և տնտեսական գործոնների տեսանկյունից անհատական նախագծման արդյունավետության հարցը,

- բնակելի նոր շրջանների ձևավորման գործընթացում կառուցապատման մեխանիզմների թերություններին, տոպոգրաֆիական հատկությունների նշանակությամբ, տարածքների օգտագործման արդյունավետությամբ, ազատ կառուցապատման մեջ պարագայինին բնորոշ գծերի և քարե շենքերում գործարանային բնակարանաշինության պահանջների իներցիոն կիրառությամբ, բակի և փողոցի ավանդական միջավայրի կորստին, բնակելի ճարտարապետության վրա կլիմայական պայմանների ազդեցությանն առնչվող խնդիրները,

- միևնույն հորինվածքի կրկնությամբ կառուցապատման հնարքների համաշխարհային փորձում բացահայտված յուրահատկությունները, դրանց Երևանի բնակելի ճարտարապետության մեջ արտահայտման միտումները, բնակելի կառուցապատման գործընթացում ստեղծագործական մոտեցման անկման խնդիրները, դրանց քաղաքի հսկա գոտիների պարզունակ գեղարվեստական կերպարի ձևավորման գործընթացում արտացոլման հարցերը:

Վեր են հանվում Երևանի 1950-1960-ականների բնակելի ճարտարապետության հետևյալ բնորոշ առանձնահատկությունները:

- Բնակելի ճարտարապետության զարգացման նոր փուլը պայմանավորվում է զանգվածային շինարարության գործընթացի ներդրմամբ, որտեղ քաղաքային միջավայրի գեղագիտությունը տեղը զիջում է սոցիալ-տնտեսական խնդիրներին:

- Քաղաքի պարագծային կառուցվածքը հակասում է զանգվածային շինարարության նոր պահանջներին, ինչն արտահայտվում է կենտրոնում շարունակվող պարագծային և նոր շրջաններում ծավալվող ազատ հատակագծման սկզբունքների փոխադարձ ներթափանցման երևույթներում:

- Նոր շրջաններում կառուցապատման ազատ հնարքների և տիպային նախագծերի ներդրումը լուրջ առաջընթաց է ապահովում շինարարության արժեքի կրճատման, բնակելի ֆոնդի արագ աճի և առանձին ընտանիքներով բնակեցման նոր սկզբունքի տեսանկյուններից: Միևնույն ժամանակ ստեղծագործական մոտեցման անկումն ու տեղակապման մեխանիկական հնարքները բերում են տեղական պայմանների անտեսման, տարածքների անարդյունավետ օգտագործման և բնակելի միջավայրի սոցիալական միջուկի՝ բակի տարածության կորստի:

- Տիպային շենքերի հորինվածքը ձևավորվում է ծայրահեղ պարզունակ պլաստիկ լուծմամբ ծավալներով: Պարագծային համակարգի հնարքների իներցիոն պահպանումը բերում է կառուցապատման բաց մոդելներում ճարտարապետական հորինվածքին հակասող՝ գլխավոր և երկրորդական ճակատների ձևավորմանը:

- Բնակելի բջջում պահպանվող նախկին կառուցվածքը չի բավարարում ֆունկցիոնալ նոր պահանջներին: Տնտեսական ցուցանիշներին հասնելու ձգտումը, կրճատելով սենյակների մակերեսը, բարձրությունը և անտեսելով ֆունկցիոնալ պահանջները, բերում է կացարանի կենցաղային և սանիտարահիգիենիկ չափանիշների անկման:

- Տիպային շենքերում մեծամասամբ ներդրվում է գործարանային արտադրության սահմանափակ տարրերով քարե կողո պատերի համակարգը, որտեղ, սակայն, ակնհայտ է հավաքովի բնակարանաշինության բնորոշ գծերի մեխանիկական կիրառումը: Դա սահմանափակում է կառույցների ճարտարապետահատակագծային լուծումների ազատությունը:

- Բնակելի կառուցապատման գեղարվեստական կերպարն արտահայտվում է որակի կտրուկ անկմամբ: Կառուցապատման մեջ հորինվածքների կրկնությունը հասնում է առեղի մասշտաբների՝ տարածության բոլոր պայմաններում ձևավորելով միևնույն կերպարները: Սա բերում է տարածության մեջ պատկանելիության կորստի երևույթին: Գեղագիտության անկմանն է նպաստում նաև բնակիչների կողմից սեփական կացարանի ձևափոխության գործընթացը (պատշգամբերի համատարած ապակեպատում):

- Կենտրոնի բնակելի կառուցապատման գործընթացում նկատելի է հնի և նորի հորինվածքային կապերի թուլացումը: Եթե անհատական նախագծման շենքերը կառուցապատմանը ներգարվվում են որպես ֆոնային տարրեր և չեն խաթարում դրա գեղագիտությանը, ապա տիպային կառույցների շինարարության ծավալումը ծայրահեղ բացասական է ազդում քաղաքային համալիրի միասնության վրա:

Գլխի հաջորդ մասում ուսումնասիրվում են բնակելի ճարտարապետության զարգացումն ու նոր ձևերի փնտրումները 1970-1980-ականներին: Կատարվում է քաղաքի կառուցվածքի, բնակելի ճարտարապետության նոր մոտեցումների և տիպային նախագծման սկզբունքների զարգացման համալիր հետազոտություն, պարզաբանվում են գոյություն ունեցող և նոր բնակելի շրջաններում, ինչպես նաև կենտրոնի կառուցապատման մեջ ի հայտ եկած հիմնախնդիրները:

Վերլուծության արդյունքում բացահայտված բնակելի ճարտարապետության փոփոխությունները 1970-ականների սկզբին կապվում են զանգվածային շինարարության առաջին տասնամյակի խնդիրների հաղթահարման փնտրումների, ինչպես նաև քաղաքի խոշորագույնների դասում հայտնվելու հանգամանքի հետ:

1971-ի գլխավոր հատակագծի ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում, որ դրա մշակումը պայմանավորվում է քաղաքի աճի հերթական ոչ ճիշտ կանխատեսմամբ (1965-ի համար նախատեսված բնակչությունը՝ 450'000 մարդ, լրանում է 1959-ին, իսկ 1970-ին արդեն՝ 767'000): Ներկայացվում են նախագծով նախատեսված քաղաքի կառուցվածքի զարգացման բնութագրերը (կենտրոնի շուրջ զարգացող հատակագծային շրջանների համակարգ), բնակչության աճի նոր կանխատեսումները (1980-ին՝ 900'000, 2000-ին՝ 1 միլիոն): Պարզվում է, սակայն, որ քաղաքի զարգացման պլանավորման բացթողումները բերում են բնակչության աննախադեպ աճի շարունակության (1978-ին՝ 1 միլիոն, 1984-ին՝ 1,1 միլիոն): Միևնույն ժամանակ շինարարության հաջորդականության խախտումներն էլ (չեն

իրականացվում շրջանների հասարակական կենտրոնները) հանգեցնում են քաղաքի ֆունկցիոնալ կազմակերպման խաթարման՝ բերելով հատակագծային շրջանների լիարժեք կառուցվածքի ձևավորման ձախողմանը: Նշված խնդիրները լուծելու նպատակով 1985-ից ձեռնարկվում է նոր գլխավոր հատակագծի մշակման գործընթացը, որը, սակայն, կապված քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետ, չի ավարտվում:

Քաղաքի բնակելի ֆոնդի աճի տեմպերի համեմատությունը խորհրդային այլ քաղաքների հետ ցույց է տալիս, որ Երևանը շարունակում է մնալ զարգացման միջին մակարդակում (1957-1991 թվականների ընթացքում կառուցվել է. Երևան – 12.85, Նովոսիբիրսկ – 22.57, Կրասնոյարսկ – 13.24, Իժևսկ – 9.16, Մագնիտոգորսկ – 6.82, Կրասնոդար – 6.25 մլն. ք.մ. բնակելի մակերես):

Լուսաբանվում է քաղաքի կառուցվածքի և բնակելի ճարտարապետության համագործակցության հարցը: Ապացուցվում է, որ 1970-ականներին կացարանի ճարտարապետությունը Երևանում կորցնում է որոշիչ նշանակությունը քաղաքային համալիրի ձևավորման գործընթացում:

Բնակելի կառուցապատման խտության ձևավորման հարցի շրջանակում ներկայացվում է եվրոպական քաղաքների բնակելի գոտիներում կառուցապատման «խառը» սկզբունքի ներդրման գործընթացը, վերլուծության են ենթարկվում դրա հիմնական առանձնահատկությունները: Հաստատվում է, որ 1970-ականներին Երևանի բնակելի ճարտարապետության գլխավոր բնորոշիչ դարձած հարկայնության աճը չի լուծում խտության ավելացման խնդիրը: Ներկայացվում են այս տարիների գիտական հետազոտություններում առաջարկված կառուցապատման խտացման առավել նպատակահարմար մոդելները:

Շոշափվում են տիպային նախագծման մեջ ավելի մանր տարրերի ստանդարտիզացման սկզբունքի կիրառությանն առնչվող հարցերը: Բացահայտվում է, որ բլոկ-սեկցիոն համակարգի ներդրումը հնարավորություն է տալիս ավելի փոքր ելակետային տարրերի բլոկացման շնորհիվ հասնել կառուցապատման առավել բազմազան հորինվածքային լուծումների:

Կատարվում է 1970-1980-ականներին ձևավորված բնակելի շրջանների (*Ավան, Ավան-Առինջ, Հարավ-Արևմտյան, Նորաշեն, Էրեբունի*), տիպային նախագծման շենքերի (*1A-450 սերիայի բարելավված փարբերակ, A1-451 КП, 129, 111 սերիաներ, ծածկերի բարձրացման մեթոդով իրականացվող նոր շենքեր*), կրճատ սերիաներով (*Ավան-Առինջի կառուցապատում, Ունեցու 41-69, Դավիթ Անհաղթի 17; 19*) և անհատական (*Բաղդամյան 29, Ամիրյան 12; 19, Մաշտոց 15, Ագաթանգեղոս 9, Չարենց 70*) նախագծված շենքերի ուսումնասիրություն, որի հիման վրա քննարկվում և վերլուծության են ենթարկվում՝

- զանգվածային կառուցապատման տիպային նախագծերի նոր սերիաներն ու անհատական նախագծման փորձը, զարգվածային բնակելի շինարարության գործընթացում կառուցապատման ձևավորման սկզբունքի դերը,
- առանձին շենքերի հարկայնության և ծավալի պարզունակ փոփոխությամբ բնակելի շրջանների անդեմ պատկերի հաղթահարման փորձերը,

- ընդարձակ հատվածների տարածահատակագծային լուծումների կանոնավորման միտումները (ռիթմիկ շարքեր, տարածական խմբեր) և դրանց արտահայտումը կառուցապատման հորինվածքների զարգացման գործընթացում,
- տեղական պայմանների վրա հիմնված նախագծման նոր մոտեցումների ձևավորման նախադրյալները, նախագծման գործընթացի բովանդակային փոփոխության (ընդհանուրից՝ մասնավոր, բազմազանությունը միասնության մեջ), բնակելի կառուցվածքի տարբեր նշանակության տարրերի փոխազդեցության, կառուցապատման հորինվածքային զարգացման խնդիրները,
- բնակելի բջջի տրանսֆորմացվող համակարգերին (ճկուն հատակագծում) առնչվող հարցերը,
- կենտրոնում կառուցված տիպային բազմահարկ բնակելի շենքերի և գոյություն ունեցող կառուցապատման անհամատեղելիությունը,
- կենտրոնում ներդրված բազմահարկ բնակելի շենքերի հաջողված օրինակներն ու ձևավորված կառուցապատման պայմաններում անհատական մոտեցման նշանակության հարցը,
- կացարանի ճարտարապետության որակի անբավարար մակարդակը բնութագրող խնդիրները (գլոբալ սերիաների անարդյունավետությունը բնակարանաշինական արդյունաբերության անբավարար հզորության պարագայում, անավարտ շինարարությունն ու աշխատանքի ցածր որակը, նախագծային մտահղացման իրագործման թերացումները, հատակագծման անկատարության արտացոլումը գեղարվեստական կերպարում):

Վեր են հանվում Երևանի 1970-1980-ականների բնակելի ճարտարապետության հետևյալ բնորոշ առանձնահատկությունները:

- Բնակելի ճարտարապետության զարգացման նոր փուլը պայմանավորվում է զանգվածային շինարարության խնդիրների հաղթահարման նոր ձևերի փնտրումներով և քաղաքի խոշորագույնների դասում հայտնվելու հանգամանքով: Բնակելի կառուցապատումը ձևավորվում է խոշոր հատակագծային շրջաններով:
- Ներդրվում է տիպայնացման տարրերի մանրացման սկզբունքով բլոկ-սեկցիոն համակարգը, ինչը նպաստում է սերիաների քաղաքաշինական հնարավորությունների ընդլայնմանն ու արտահայտվում կառուցապատման հորինվածքների բարելավման մեջ: Տարածական խմբերի և կառուցապատման արդյունավետ մոդելների ներդրման շնորհիվ շենքերի միջև առաջանում է հորինվածքային կապվածություն: Վերականգնվում է բակի տարածությունը:
- Մշակվում են կառուցապատման սահմանափակ տարրերով, ծավալի և ճակատի փոփոխության հնարավորությամբ շենքերի նախագծերի կրճատ սերիաներ: Հաշվի առնելով տեղական պայմաններն ու ընդունելով քաղաքաշինական գաղափարից միավոր տարրերի մշակման սկզբունքը՝ դրանք ձևավորում են անհատական և տիպային նախագծման դրական որակների միավորման արդյունավետ տարբերակ:
- Բնակելի կառուցապատման գործընթացն արտահայտվում է հարկայնության աճով: Կառուցապատման խտացմանն ու կերպարի հագեցմանը միտված հարկայնության մեխանիկական աճը, սակայն, զուրկ լինելով մասնագիտական

հիմնավորումից և ստեղծագործական սկզբունքներից, չի նպաստում դրված խնդիրների լուծմանը:

- Բնակելի շենքերի ծավալատարածական լուծումներին բնորոշ են ձևերի զարգացումն ու մասշտաբի խոշորացումը, որոնք, սակայն, էապես չեն բարելավում շենքերի գեղարվեստական լուծումները: Դրանք մեծամասամբ բնորոշվում են արտահայտչության ցածր մակարդակի, կարծրատիպային կերպարով:

- Բնակելի բջջում ներդրվում են ճկուն հատակագծման մեթոդները: Դա թույլ է տալիս բնակարանի հատակագծային լուծումները համապատասխանեցնել տարբեր ընտանիքների որոշակի պահանջներին:

- Շենքերում ակհայտ է ճարտարապետական լուծումների և կայունության փոխադարձ անբավարար կապվածությունը: Ճարտարապետության որակի վրա բացասական են ազդում նաև շինարարության խնդիրները՝ աշխատանքների ցածր որակը, թերի իրականացումը, արտադրության ոչ ճկուն համակարգը:

- Կենտրոնում բազմահարկերի ներդրումը պարագծային կառուցապատման մեջ, բացառությամբ հազվադեպ հաջողված դեպքերի, երբ հաշվի են առնվում տեղանքի պահանջներն ու ձևավորվում է ինքնատիպ կերպար, բացասաբար է ազդում ընդհանուր համալիրի վրա: Ստանդարտ շենքերի անդեմությունն ու քաղաքաշինական-հորինվածքային մոտեցման պակասը թուլացնում են կենտրոնի միասնությունը, բնակչության խտացումն էլ փոքր թաղամասերում բերում է սպասարկման, մանկական, ուսումնական հիմնարկների կազմակերպման և բարեկարգման խնդիրների:

Գլուխ III-ը՝ «Բնակելի ճարտարապետության զարգացումը նոր սոցիալ-տնտեսական պայմաններում (1992-2017 թթ.)» նվիրված է կացարանի ճարտարապետության խնդիրների բացահայտմանը հետխորհրդային շրջանում՝ 1992 թվականից մինչև այսօր: Գլխում պարզաբանվում են զանգվածային շինարարության գործընթացի անկման հանգամանքները, դուրս են բերվում բնակելի ճարտարապետության զարգացման նոր ուղղությունները, հետազոտվում են կենտրոնի և բնակելի շրջանների կառուցապատման ճարտարապետա-քաղաքաշինական յուրահատկությունները, կատարվում է բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային կառուցվածքի վերլուծություն, վեր են հանվում կացարանի ճարտարապետության զարգացման ժամանակակից փուլի դրական և բացասական միտումները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1990-ականների սկզբից ծավալվող բնակելի ճարտարապետության զարգացման նոր փուլը կապվում է երկրում սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետ՝ բնորոշվելով զանգվածային շինարարության անկմամբ և կացարանի ձևագոյացման կտրուկ փոփոխությամբ: Սոցիալական բնակելի ֆոնդի ձևավորման պետական գործընթացը տեղը գիջում է անհատ սեփականության շահերից բխող առանձին շենքերի շինարարությանը:

Քաղաքի հաջորդ և վերջին՝ 2005-ի գլխավոր հատակագծի ուսումնասիրության արդյունքում բացահայտվում է, որ Երևանն այսօր զարգանում է քաղաքաշինական մոտեցման բացակայության պայմաններում: Վերջինս հետևանք է նրա, որ անցյալում հասարակական սկզբունքներով ձևավորված քաղաքը ներկայումս

զարգանում է բացառապես անհատ սեփականության պահանջներով՝ հանգելով քաղաքի հողերի համատարած քառասյին բնակելի կառուցապատման: Նման զարգացումն առաջին հերթին պայմանավորվում է այն հանգամանքով, որ նախագիծը ստիպված է լինում ներառել 1991-ից հետո տարերայնորեն իրականացված կառուցապատման լուծումները: Սակայն գլխավոր հատակագծի հիման վրա մշակված առանձին շրջանների գոտևորման նախագծերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց լուծումները երբեմն խախտվում են նաև նախագծի հաստատումից հետո (դիտարկվում է կենտրոնի, Դավիթաշենի, Աջափնյակի, Արաբկիրի օրինակներով): Երևանի զարգացման ներկա փուլի յուրահատկություններից է միջանկյալ, կանաչ տարածքների համատարած իրացումը (բնական ամֆիթատրոնի լանջեր, Դալմայի այգիներ, Հրազդանի կիրճ), ինչը բացասական է ազդում քաղաքի կլիմայական և կենսագործունեության սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Քննարկվում են 1988-ի երկրաշարժից հետո կացարանի նախագծման ոլորտի փոփոխությունները, զանգվածային շինարարության կասեցման հանգամանքները՝ պայմանավորված քաղաքական ձևափոխությունների հետևանքով բնակելի շինարարության անկման գործընթացով: Ներկայացվում են սոցիալ-տնտեսական նոր պայմաններում բնակելի կառուցապատման պետական կառավարման գործընթացի կասեցման խնդիրները, հասարակական սկզբունքներով ձևավորված քաղաքի կառուցվածքի անհատ սեփականության շահերով տարերային կառուցապատման հակասություններն ու դրանց հետևանքները:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ շուկայական տնտեսության վրա հիմնված սոցիալական նոր համակարգում կացարանի ճարտարապետությունը զարգանում է հասարակության բնեռացման պայմաններում: Վեր են հանվում բնակելի ճարտարապետության զարգացման արդի ուղղությունները (առանձնատներ, առանձին բնակելի շենքեր կամ համալիրներ, գոյություն ունեցող կառուցապատման վերակառուցում): Քննարկվում են 2000-ականներից ծավալված մատչելի կացարանի ձևագոյացման սոցիալական հիմքերը, դրանց ազդեցությունը ճարտարապետության վրա: Հաստատվում է, որ սոցիալական կացարանի ձևագոյացման նախադրյալները պայմանավորված են ոչ թե փոքր միջոցներով կենսագործունեության անհրաժեշտ պայմանների ապահովման խնդրով, այլ շինարարության արժեքի առավելագույն կրճատման հաշվին շահույթի ավելացման ձգտմամբ, ինչն էլ հանգեցնում է հատակագծային, ֆունկցիոնալ, սանիտարահիգիենիկ տարրական պահանջներն անտեսելու տարածված երևույթին:

Արժարձվում են բնակելի շենքերի վերակառուցման գործընթացի բնորոշ առանձնահատկությունները: Բացահայտվում է, որ այն իրականացվում է առանձին բնակարանների հատվածներով և զուրկ է շենքի ընդհանուր կառուցվածքային և գեղարվեստական լուծումների տեսանկյունից դիտարկվելու հնարավորությունից: 1920-1950-ականների պարագծային կառուցապատման և 1960-1980-ականների արդյունաբերական շինարարության բնակելի կառույցներում վերակառուցման գործընթացի ընդհանրացումը թույլ է տալիս պնդել, որ այն ընթանում է

պատմամշակութային արժեքների պահպանության և սեյսմիկ անվտանգության պահանջների կոպիտ խախտումներով:

Կատարվում է 1991-ից հետո կառուցված որոշ շենքերի (*Արամի 60-64, Ձորափի 40, Ծիծեռնակաբերդի 1/2, Սայաթ-Նովա 19/1; Նալբանդյան փակ. 3, Հանրապետության 53, Ջարյան 22, Վարդանանց 18, Իսահակյան 26, Լենինգրադյան 23/11*) և քաղաքի հորինվածքային առանցքների՝ *Հյուսիսային և Գլխավոր պողոտաների* կառուցապատման հետազոտություն, որի հիման վրա քննարկվում և վերլուծության են ենթարկվում՝

- կենտրոնական միջուկի զարգացման, հարկայնության աճի, կառուցապատման գերխտացման միտումները, կենտրոնի քաղաքաշինական համալիրի տրոհման խորացող խնդիրներն ու դրանց ազդեցությունը միջավայրի վրա,
- ամբողջական տարածքների միասնական կառուցապատման գործընթացում ծագած հիմնախնդիրները (գոյություն ունեցող անսամբլների մեկուսացում, տարածության աղճատում),
- կառուցապատման միասնական լուծումներից հատային նախագծման վերադառնալու հարցը, որը ներկայացվում է քաղաքի գոյություն ունեցող և նոր շրջաններում կառուցվող բնակելի շենքերի ճարտարապետաքաղաքաշինական և հորինվածքային լուծումներում,
- բնակելի շենքերի ծավալատարածական և հատակագծային լուծումների ձևավորման նախադրյալներն ու հիմնական բնութագրերը, բնակելի բջջի զարգացման հակասությունները,
- կացարանի ճարտարապետության գեղարվեստական բնորոշիչները, որոնք դիտարկվում են լուծումների ամբողջության և շենքի կերպարի անհատականության տեսանկյուններից:

Վեր են հանվում Երևանի 1990-2010-ականների բնակելի ճարտարապետության հետևյալ բնորոշ առանձնահատկությունները:

- Բնակելի ճարտարապետության զարգացման նորը փուլը պայմանավորվում է երկրում սոցիալ-տնտեսական փոփոխություններով: Բնակելի ֆոնդի ձևավորման սոցիալական գործընթացը տեղը զիջում է անհատ սեփականության շահերից բխող շինարարությանը:
- Երևանի կառուցվածքը զարգանում է քաղաքաշինական մոտեցման բացակայությամբ, առանձին, տեղական նշանակության լուծումներով՝ անտեսելով կառուցապատման համալիր սկզբունքները, միջավայրի անվտանգությունն ու գեղագիտությունը: Քաղաքի միջանկյալ, բաց, կանաչապատ տարածքների ոչնչացումը նկատելիորեն փոխում է կլիման ու սանիտարահիգիենիկ պայմանները:
- Բնակելի ճարտարապետությունը զարգանում է հասարակության բևեռացման պայմաններում՝ առանձնատների, առանձին բազմաբնակարան շենքերի և գոյություն ունեցող կառույցների վերակառուցման ուղղություններով:
- Կենտրոնի զարգացմանը բնորոշ են հարկայնության անթույլատրելի աճն ու կառուցապատման գերխտացումը, որոնք բերում են ձևավորված անսամբլների մեկուսացման և քաղաքաշինության գլխավոր տարրի՝ տարածության ոչնչացման՝ ազդելով միջավայրի գեղագիտության և մարդու հոգեբանության վրա: Գոյություն

ունեցող և նոր շրջաններում ծավալված շինարարությանը ևս բնորոշ են այս գծերը: Կառուցապատման գրեթե բոլոր տարբերակներում նկատելի է միասնական մոտեցման բացակայությունն ու անցումը հատային նախագծման անարդյունավետ միջոցներին:

Հետազոտության արդյունքում վեր են հանվում նոր սոցիալ-տնտեսական պայմաններում բնակելի կառույցների ճարտարապետության զարգացման դրական և բացասական կողմերը:

● Դրական կողմերն են՝

- ժամանակակից նյութերի և տեխնոլոգիաների կիրառությունը (կրճատում է շինարարության արժեքն ու ժամկետները, բարձրացնում է շենքերի շահագործման արդյունավետությունը),
- շինարարության բարձր որակը (նպաստում է կառույցների կայունության ամրապնդմանը),
- աշխատանքների լիարժեք իրականացումը (շինարարության ավարտին բերում է շենքերի նախագծային արտաքին և ներքին լուծումների լիարժեք իրագործմանը),
- բնակարանների ազատ հատակագծման հնարավորությունները (բնակիչներին թույլ են տալիս բնակարանի հատակագծային լուծումները կազմակերպել՝ համաձայն սեփական որոշակի պահանջների):

● Բացասական կողմերն են՝

- քաղաքաշինական պահանջների խախտումները (կառուցապատման մեծ մասշտաբի լուծումների բացակայությունն ու հորինվածքային միասնության կորուստը, ներթափանցանքային տարածքների համատարած կառուցապատումը, շենքերի միջև հեռավորության կրճատումը, կարմիր և դեղին գծերի խախտումները, բնակելի միջավայրի ավանդական միավորի՝ բակի տարածության ոչնչացումը, պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցների աղավաղումը),
- ճարտարապետահատակագծային պահանջների խախտումները (հարկայնության անթույլատրելի աճը, մասնաշենքերի չափազանց մեծ խորությունը, բնակարանների կողմնորոշումը),
- սանիտարահիգիենիկ պահանջների խախտումները (բնակարաններում բնական լուսավորության, օդափոխության և արևահարման անբավարար պայմանները),
- գեղարվեստական ցածր որակը (գեղարվեստական ընդհանուր չափանիշների բացակայությունը, կերպարի չափազանց լայն բազմազանությունը, նմականման և կրկնօրինակման երևույթները):

Գլուխ IV-ը՝ «Հանձնարարականներ Երևանի բնակելի ճարտարապետության ապագա զարգացման համար» նվիրված է Երևանում բնակելի ճարտարապետության հետագա զարգացման ուղիների բացահայտմանն ու դրա համար գիտականորեն հիմնավորված հանձնարարականների մշակմանը:

Գլխի սկզբում քննարկվում են սոցիալապես մատչելի բնակելի ֆոնդի պահանջի և կացարանի ձևագոյացման վերահիմնաստավորման հարցերը: Հիմնավորվում է ճարտարապետության կազմավորման և կացարանի ձևագոյացման սկզբունքներում սոցիալական գործոնների վերականգնման անհրաժեշտությունը, բնակելի շինարարության ներկա պահանջարկն ու գործընթացում պետության գլխավոր

դերակատարությունը: Լուսաբանվում են բնակարանաշինության զարգացման հնարավորություններն ու դրանց կանխատեսելի արդյունքները, հիմնավորվում է ձևագոյացման խնդիրներն արտացոլող ծրագրեր ունենալու պահանջը:

Առանձնացվում է հատային նախագծումից կառուցապատման համալիրների մշակման անցնելու հարցը: Հիմնավորվում է քաղաքաշինական գաղափարից առանձին տարրերի մշակման սկզբունքի վերականգնման պահանջը, առաջարկվում են քաղաքաշինական-անսամբլային լուծմամբ կառուցապատման ձևավորման գործընթացի հնարավոր մոտեցումները:

Ընդհանրացվում են կենտրոնի, բնակելի շրջանների և նոր գոտիների կառուցապատման խնդիրները: Առաջարկվում են նոր ձևավորվող շրջանների կառուցապատման սկզբունքներ, ներկայացվում դրանց բաղադրիչ տարրերի հատակագծային և ծավալատարածական հիմնական բնութագրերը: Առաջ են քաշվում կենտրոնում և գոյություն ունեցող շրջաններում բնակելի կառուցապատման զարգացման գործընթացի գլխավոր ուղղությունները, առանձնացվում են նոր կառուցապատման հիմնական չափանիշներն ու հատուկ ուշադրություն արժանի խնդիրները:

Վեր է հանվում կառույցների ճարտարապետահատակագծային և ծավալատարածական լուծումների անխզելի փոխկապվածության հարցը: Հիմնավորվում են բնակելի շենքերի և կառուցապատման նոր արդյունավետ համակարգերի ձևավորման խնդիրը, շենքերի ծավալահատակագծային և հորինվածքային լուծումներին ներկայացվող պահանջները: Բնակելի բջջի լուծումներում բնակլիմայական պայմանների ընձեռած հնարավորություններից օգտվելու եղանակներն առաջարկվում է փնտրել ժողովրդական տան ճարտարապետության մեջ:

Պարզաբանվում են կառուցման արագություն, ցածր արժեք և ճարտարապետական լուծումների ազատություն ընձեռող կառուցվածքային համակարգերի ներդրման պահանջի հիմնավորումները, ներկայացվում են դրա անհրաժեշտ պայմաններն ու միջոցառումները:

Քննարկվում են բնակելի կառուցապատման կերպարի անհատականության և ինքնատիպության հարցերը: Հիմնավորվում է բնակելի կառույցների գեղարվեստական լուծումներում քաղաքաշինական միջավայրի թելադրած պայմաններին ենթարկվելու պահանջը: Ներկայացվում են կենտրոնի և այլ շրջանների բնակելի կառուցապատման գործնթացում հին և նոր հատվածների հորինվածքային ինտեգրման խնդիրները, որոնք դիտվում են որպես քաղաքի կերպարի միասնության ամրապնդման և արդիականության մեջ անցյալի արժեքավոր տարրերի պահպանության միջոցներ:

Լուսաբանվում են գոյություն ունեցող բնակելի կառուցապատման արդիականացման անհրաժեշտության տնտեսական և պատմամշակութային հիմնավորմանն առնչվող հարցերը, ատենախոսության շրջանակում այդ ուղղությամբ կատարված աշխատանքները:

Գլխի հաջորդ մասում ներկայացվում են հետազոտության արդյունքում մշակված երևանի բնակելի ճարտարապետության հետագա զարգացման հանձնարարականները:

1) Գոտևորման նախագծերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ դրանց մեջ ներառված կառուցապատման էքսիզները չեն ամրագրում նախատեսվող կառուցապատման ծավալահատակագծային հստակ չափանիշներ: Արդյունքում իրականացվող կառուցապատումն ընթանում է առանձին, անհատական լուծումներով, որտեղ հաշվի չեն առնվում ընդհանուր կառուցապատման անհրաժեշտ պահանջները, և ձևավորվում է տարերային կառուցապատմամբ անկանոն միջավայր:

- Տվյալ խնդիրները պահանջվում է կարգավորել վարչական շրջանների առանձին տարածքների գոտևորման նախագծերում կառուցապատման էքսիզները կառուցապատման նախագծերի վերամշակելու միջոցով: Վերջիններս պետք է ներառեն շենքերի հատակագծային ուրվագծի և չափերի, բարձրության, հարկայնության, շենքերի միջև հեռավորության հստակ չափանիշներ:

2) Հետազոտությունը ցույց է տալիս, որ շինարարության նոր գոտիներում հողամասերի տրամադրումն ընթանում է առանց կառուցապատման նախագծերի և դրանց ծավալատարածական լուծումների: Դա բերում է քաղաքաշինական պահանջների խախտման և միջավայրի հորինվածքային-գեղարվեստական լուծումների ցածր մակարդակի: Խնդիրներ են ծագում նաև ավտոկայանատեղերի ու հանգստի գոտիների կազմակերպման արդյունավետության տեսանկյունից:

- Վերը նշված անհամապատասխանությունները հաղթահարելու նպատակով առաջարկվում է բնակելի կառուցապատման նոր գոտիներում հողամասերը տրամադրել բացառապես կառուցապատման նախագծերում նախատեսված ծավալների թելադրած սահմաններով, որտեղ բացի միասնական քաղաքաշինական-հորինվածքային լուծումներից հաշվի կառնվեն նաև բարեկարգման տարրերին ներկայացվող ընդհանուր պահանջները:

3) Գոյություն ունեցող բնակելի շենքերի կառուցվածքային համակարգի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել մի շարք խնդիրներ: Դրանց մի մասը կապված է այն հանգամանքի հետ, որ ներկայումս խստացվել են շենքերի կոնստրուկտիվ համակարգին ներկայացվող նորմատիվ պահանջները, որոնց անցյալում կառուցված շենքերից շատերը չեն բավարարում (կոշտությունների բացակայություն, կոնստրուկտիվ տարրերի փոքր կտրվածք): Հիմնախնդիրները կապված են նաև ֆիզիկական մաշվածության հետ (մինչև 1950-ականներ կառուցված շենքերի փայտե միջհարկային ծածկեր): Նշվածներից բացի, բնակելի կառույցների կոնստրուկտիվ համակարգի կայունության վրա ազդում են նաև տարբեր ժամանակ իրականացված տարերային վերակառուցման գործընթացները (կրող պատերում իրականացված նոր բացվածքներ, գոյություն ունեցող բացվածքների խոշորացում, կոնստրուկտիվ տարրերի ձևափոխություններ, կցակառույցներ): Թվարկված բոլոր խնդիրները թուլացնում են կառույցների սեյսմակայունությունը:

- Բնակելի կառուցապատման անվտանգության բարձրացման համար պահանջվում է անձնագրավորման ենթարկել գոյություն ունեցող բնակելի ֆոնդը սեյսմակայունության տեսանկյունից: Վերջինիս արդյունք է դիտարկվում շենքերի դասակարգումն ըստ անհրաժեշտ գործառույթներով պայմանավորված խմբերի՝ պահպանվող (բավարարում են գործող պահանջներին), վերակառուցվող (վերակառուցման արդյունքում կարող են բավարարել գործող պահանջներին), քանդվող (գործող պահանջներին համապատասխանեցնելու ծախսերը գերազանցում են քանդելու և նորը կառուցելու արժեքին):

4) Գոյություն ունեցող բնակելի կառուցապատման վերլուծությունն ակնհայտ է դարձնում, որ այնտեղ զգալի քանակ են կազմում անվտանգության տեսանկյունից խնդրահարույց բազմահարկ շենքերը: Քիչ չեն դեպքերը, երբ դրանք խաթարում են նաև կառուցապատման հորինվածքային կերպարը: Մյուս կողմից էլ, բնակելի կառուցապատման մեջ առկա են հատվածներ, որտեղ տարբեր պատճառներով չեն իրականացվել կամ օտարվել են քաղաքաշինական մտահղացմամբ նախատեսված կառույցները (պարագծային կառուցապատման բաց հատվածներ, խմբային կառուցապատման չիրականացված շենքեր, վթարային կառույցներ):

- Վեր հանված խնդիրների լուծման տարբերակ է դիտարկվում գոյություն ունեցող բնակելի կառուցապատման հարկայնության և տարածահատակագծային կառուցվածքի համաչափության բերելը, որը կարող է իրականացվել հարկայնության կրճատման կամ ավելացման և կառուցապատման թերի հատվածների լրացման միջոցներով: Հարկայնության կրճատման դեպքում բնակելի ֆոնդի առաջացած պակասորդը կարելի է փոխհատուցել կառուցապատման լրացվող հատվածներում ձևավորվող մակերեսի հաշվին:

5) Երևանի վերջին հարյուրամյակի բնակելի ճարտարապետության ընդհանրացումը մի շարք հիմնախնդիրներ է վեր հանում շենքերի արտաքին լուծումներում: Բացահայտված խնդիրներն արտահայտվում են երկու հիմնական ուղղությամբ: Առաջինը՝ բնօրինակային լուծման խեղաթյուրումն է: Այն հիմնականում վերաբերվում է մինչև 1960-ականները կառուցված քարե ճարտարապետության շենքերին և արտահայտվում ճակատային լուծման ձևափոխություններում: Երկրորդը՝ նախագծային թերի լուծումներն են կամ դրանց ոչ լիարժեք իրականացումը: Դրանք մեծամասամբ վերաբերվում են 1960-1980-ականներին կառուցված շենքերին (երեսապատող կոնստրուկցիաների ցածր գեղարվեստական կերպար, ջերմաֆիզիկական անբավարար հատկություններ): Հանդիպում են դեպքեր, երբ այս խնդիրներն արտահայտվում են միասին (քարե շենքերի կողային ճակատներում չի իրականացված երեսապատումը, անհատական ձևափոխության հետևանքով աղավաղված են տիպային շենքերի առանց այդ էլ խոցուկ արտաքին լուծումները): Նշվածը բերում է բնակելի կառուցապատման ընդհանուր գեղարվեստական կերպարի ծայրահեղ ցածր մակարդակի և տարբեր հատվածների միջև հորինվածքային կապերի բացակայության:

- Կառուցապատման արտաքին ճարտարապետության բարելավման նպատակով պահանջվում է կատարել գոյություն ունեցող բնակելի կառույցների ճակատների հորինվածքային փոփոխություններ և արդիականացում՝ համաաձայնեցնել տարբեր

Ժամանակ ձևավորված լուծումները, նույնականացնել պատուհաններն ու բացվածքները, կանոնավորել գովազդային տարրերը, կրճատել ջերմակրուստները, իրականացնել շնչող պատեր, օգտագործել էներգիայի ձևավորման այլընտրանքային աղբյուրները: Ջրահեռացման բարելավումը խորհուրդ է տրվում իրականացնել ոչ թե ճակատներում խողովակների վերադասավորման, այլ տանիքներում ջրհավաքների վերակառուցման միջոցով: Նշված միջոցառումները ոչ միայն թույլ կտան բարելավել կառուցապատման գեղարվեստական կերպարը, այլ նաև հնարավորություն կստեղծեն բարձրացնել բնակելի կառույցների շահագործման արդյունավետությունը:

6) Երևանի բնակելի կառուցապատման տանիքների ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում, որ այստեղ առկա խնդիրներն առաջին հերթին կապված են առանձին հատվածների տարերային վերակառուցման հետ: Նախագծային և վերահսկողական օրենսդրության անգործության հետևանքով բնակելի շենքերի տարբեր հատվածներում, ըստ սեփական հնարավորությունների և ցանկությունների՝ կառուցվել են միմյանց հետ որևէ առնչություն չունեցող վերնահարկեր, որոնք բերում են քաղաքի գեղարվեստական կերպարի արժեզրկման: Մյուս կողմից էլ, վերակառուցման չենթարկված հատվածներում տանիքները հաճախ վնասված են և գտնվում են տեխնիկապես անբավարար իրավիճակում:

- Առաջացած խնդիրների կարգավորման համար արդիական է համարվում գոյություն ունեցող բնակելի կառուցապատման տանիքների տարբեր հատվածների վերակառուցումը, ինչը հնարավորություն կտա բերել դրանք կառուցապատման մեծ կտորներով համաձայնեցված, միասնական լուծումների: Նման գործընթացը թույլ կտա ոչ միայն բարելավել քաղաքի կառուցապատման «հիմները» ճակատը, այլ նաև կնպաստի ձեռնհարկերի կազմակերպմանն ու կացարանի շահագործման արդյունավետության բարձրացմանը (ժամանակակից նյութերի օգտագործում, արևային էներգիայի օգտագործման համակարգերի և ինժեներական հանգույցների տեղադրում): Օգտակար կլինի կազմակերպել նաև բնակիչների համար նախատեսված հանգստի գոտիներ (տեռասներ, կանաչապուր, բացվող տանիքներ):

7) Կենտրոնական փողոցների բնակելի շենքերի ճակատների 2011-2012 թվականների վերականգնման-վերակառուցման աշխատանքների վերլուծությունը պարզ է դարձնում, որ չնայած գործընթացի դրական կողմերին (տարիների ընթացքում բնականորեն և արհեստականորեն ի հայտ եկած ձևափոխությունների վերացում, շենքերի ճարտարապետական կերպարի մասնակի վերականգնում), առկա են նաև բացթողումներ: Սվաղված և ներկված ճակատների գունային լուծումներում ակնհայտ է վառ երանգների բազմազանությունը, ինչը, սակայն, որևէ առնչություն չունի Երևանի կերպարին բնորոշ բնական քարերի երանգների և սպիտակ-մոխրագույն սվաղի նրբաճաշակ համադրության հետ:

- Քաղաքի կերպարի վերականգնման տեսանկյունից խորհուրդ է տրվում ներդաշնակել շենքերի ճակատների գունային լուծումները՝ ընդհանուր կառուցապատման մեջ ստանալով համահունչ գեղարվեստական ձևավորումներ: Երանգների ընտրությունը խորհուրդ է տրվում կատարել մասնագիտորեն՝ հաշվի

առնելով քաղաքի կառուցապատման գունային առանձնահատկությունները և դիտելով փողոցների մեծ հատվածները միասնության մեջ:

8) Բնակելի կառուցապատման բակային տարածքների ներկա պայմանների գննությունը հաստատում է դրանց անբարվոք վիճակը: Վերջինս կապված է ինչպես դեռևս 1920-1930-ականներից ծավալված պարագծային կառուցապատման իրագործման բացթողումների (երբ առաջին հերթին իրացվում էին բնակելի շենքերի համար փողոցների հարող հատվածները, իսկ թաղամասերի կենտրոնում մնացող հին կառուցապատման իրացումն անընդհատ հետաձգվում էր), այնպես էլ վերջին տասնամյակներում հասարակական տարածքների զավթման և տարբեր կառույցների շինարարության հետ (ավտոտնակներ, սպասարկման օբյեկտներ): Նման վիճակը թուլացնում է բնակելի միջավայրի որակը և բերում թաղամասերում քաղաքաշինական և սանիտարահիգիենիկ անթույլատրելի պայմանների:

- Ծագած խնդիրների կարգավորումը դիտարկվում է ներթաղամասային տարածքների վերակառուցման գործընթացում (խաղահրապարակների, հանգստի գոտիների, ավտոկայանատեղերի, տրանսպորտային մոտեցումների ապահովում, կանաչապատում): Հանրապետության, Տպագրիչների փողոցներով և Վարդանանց փողոցի փակուղով պարփակված թաղամասի ներկա իրավիճակի վերլուծության հիման վրա ապացուցվում է, որ բակերում տարերայնորեն առաջացած կառույցների մակերեսը հնարավոր է փոխհատուցել տանիքների չօգտագործված հատվածների և ստորգետնյա կառուցապատման հաշվին (հնարավոր է կառուցել իրացվող տարածքների 227 %-ին համարժեք մակերես), (հավելված 3):

9) Բնակելի շենքերի առաջին հարկերում հասարակական տարածքների կազմակերպման գործընթացի վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել դրա խնդրահարույց կողմերը: Խնդիրներն այստեղ հիմնականում կապված են բնակելի և հասարակական հատվածների ֆունկցիոնալ տարանջատման ապահովման հետ: Չունենալով ծառայողական առանձին մուտքեր, հասարակական օբյեկտների սպասարկումը հաճախ կազմակերպվում է բնակելի հատվածի մուտքերից՝ անհարմարություն ստեղծելով բնակիչների համար: Բացի դրանից, զարգացած խոհանոցային արտադրությամբ սննդի օբյեկտների պարագայում, չնայած կազմակերպված օդափոխության համակարգերին, բնակելի մուտքերում և սանդղավանդակներում չի հաջողվում ապահովել բավարար օդափոխություն:

- Բնակիչների կենսագործունեության պայմանների բարեփոխման համար պահանջվում է բնակելի շենքերի ստորին հարկերում բացառել զարգացած խոհանոցային արտադրությամբ սննդի օբյեկտների տեղադրումը: Հասարակական սպասարկման այլ հիմնարկների տեղադրման պարագայում պարտադիր պայման է համարվում բնակելի հատվածի մուտքերից դուրս, առանձին մոտեցումների կազմակերպումը:

10) Վերջին տասնամյակներին կառուցված բնակելի շենքերի ուսումնասիրված օրինակների ընդհանրացումը պարզ է դարձնում, որ դրանց հատակագծային լուծումներում առկա են մի շարք հիմնախնդիրներ (բնակարանների միակողմանի կողմնորոշում, չափազանց մեծ խորություն, թերի բնական լուսավորություն, օդափոխություն, արևահարում): Լուծել այս խնդիրներն արդեն կառուցված և

անհատական սեփականություն հանդիսացող կառույցներում գործնականում անհնար է կամ էլ կապված է ահռելի ֆինանսական ներդրումների հետ, որոնք իրատեսական չեն: Այսպիսով, բնակարանների հատակագծային լուծումներին ներկայացվող պահանջների պահպանումն անհրաժեշտ է վերահսկել դեռևս նախագծային լուծումների մշակման փուլում: Սակայն գոյություն ունեցող շենքերում առկա որոշ խնդիրների կարգավորման համար կան հնարավորություններ:

- Գոյություն ունեցող բնակելի կառույցներում սանիտարահիգիենիկ պայմանների կարգավորման միջոցառում է դիտվում բնական օդափոխության հորանների կազմակերպումը: Տեղադրվելով շենքերի ընդհանուր միջանցքներում (բնակարանների խորքային հատվածներին կից)՝ դրանք կապահովեն բնական միջանցիկ օդափոխություն: Այստեղ կարևոր է, որպեսզի հորաններն ունենան մեխանիկական կարգավորման (բացել կամ փակել) հնարավորություն, ինչը թույլ կտա կառավարել տան միկրոկլիման: Հորաններն անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր բնակարանից տանիք բարձրացող առանձին խողովակով:

11) Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակներում ինտենսիվ կառուցապատման է ենթարկվում Երևանի կենտրոնական միջուկը: Չնայած նրան, որ քաղաքի կենտրոնում դեռևս 1990-ականների սկզբին առկա էին իրացման ենթակա խարխուլ կառուցապատման որոշակի գոտիներ, սակայն դրանց կառուցապատումը հետագա տարիներին ընթացավ այն աստիճանի ինտենսիվությամբ, որ բերեց քաղաքաշինական և սանիտարական պահանջների ծայրահեղ խախտումների: Այս երևույթը պայմանավորված է նրանով, որ կենտրոնում և այլ շրջաններում շինարարության գրեթե հավասար ծախսերի պարագայում առաջանում է շահույթի էական տարբերություն (անշարժ գույքի գները կենտրոնում և այլ շրջաններում տարբերվում են շուրջ 4 անգամ): Նման իրավիճակի պայմաններում բնական է, որ կենտրոնում շինարարություն ձեռնարկելն անհամեմատ գրավիչ է, քան քաղաքի այլ հատվածներում:

Կենտրոնի 2007-ին մշակված գոտևորման նախագծի և դրա տեխնիկատնտեսական ցուցանիշների հետազոտությունն ակնհայտ է դարձնում, որ կառուցապատման խտացման գործընթացը նախատեսվում է շարունակել (բնակելի ֆոնդի աճ՝ 40 %, բնակչության խտության աճ՝ 28 % - մինչև 272 մա/հա): Այստեղ պետք է հաշվի առնել նաև, որ բնակչության նման խտության պարագայում կենտրոնում առկա են նաև բազմաթիվ այլ ֆունկցիոնալ տարրեր (վարչական, ուսումնական, առևտրային, մշակութային, սպորտային, ժամանցային): Եվ բնակչության նման խտացումը տրամագծորեն հակասում է քաղաքի համակարգի բարենպաստ զարգացման պայմաններին: Դա բերելու է կենտրոնում վտանգավոր իրավիճակի ձևավորմանը՝ էլ ավելի սրելով կառուցապատման պահանջների խախտումները, տրանսպորտային և հետիոտն շարժման, ինժեներական կոմունիկացիաների կազմակերպման խնդիրները:

- Կառուցապատման նման անհամաչափության դեմ պայքարելու համար առաջարկվում է քաղաքի տարբեր հատվածներում ներդրման և շահույթի հավասարակշռության կառավարումն իրականացնել հարկային քաղաքականության միջոցով: Ինքնավարությունն այստեղ պետք է ուղղված լինի տարբեր գոտիներում

բնակելի շինարարության համար տարբեր հարկային տոկոսաչափերի սահմանմանը, ինչն արդյունքում թույլ կտա ներդրման և շահույթի հարաբերության կարգավորման միջոցով բնակելի շինարարությունն ուղղորդել դեպի քաղաքի զարգացման համար նպատակահարմար գոտիներ:

12) Կառուցապատման ծավալատարածական լուծումների վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքի տարբեր գոտիներում տարբեր բարձրության շենքերի կառուցման արդյունքում տուժում են բնակարաններից բացվող համայնապատկերները: Դա կարևոր խնդիր է կացարանի հարմարավետության մակարդակի ապահովման տեսանկյունից, քանի որ բնակարանից բացվող տեսարանն անմիջական ազդեցություն է թողնում բնակիչների հոգեբանության վրա:

- Համայնապատկերները բարելավելու նպատակով խորհուրդ է տրվում մշակել նախատեսվող կառուցապատման հարկայնությունը սահմանափակող գոտևորում: Վերջինիս համար հիմք պետք է ընդունվեն Երևանի աշխարհագրական և տոպոգրաֆիական յուրահատկությունները: Համաձայն դրանց՝ բարձրադիրքից դեպի ցածրադիրք գոտիներ հարկայնության աստիճանաբար կրճատումը (հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք) թույլ կտա կառուցապատման տարբեր հատվածներում ապահովել դեպի հարավ և հարավ-արևմուտք բացվող առավել ընդարձակ տեսարաններ (Արարատյան դաշտ, Արարատ լեռ, Հայկական Պար լեռնաշղթա), (հավելված 4):

13) Բնօրինակային հետազոտությունները վկայում են, որ 1920-1950-ականներին կառուցված բնակելի շենքերը ներկայումս կրում են լուրջ ձևափոխություններ: Աղավաղվում են ճակատային լուծումները, կատարվում են կառուցվածքային միջամտություններ, իրականացվում են կցակառուցյուններ, կառուցապատման գոտիներում ներդրվում են բարձր հարկայնության և խոշոր ծավալի նոր կառույցներ: Այս գործընթացները բերում են նրան, որ քաղաքի կերպարի յուրահատկությունն ապահովող և պատմամշակութային արժեք ներկայացնող 1920-1950-ականների բնակելի կառուցապատումը ենթարկվում է աղճատման:

- Քաղաքի կերպարի ինքնատիպության պահպանման անհրաժեշտությունը ենթադրում է հուշարձանի կարգավիճակ տալ Երևանում 1924-1956 թվականներին կառուցված բնակելի շենքերի անսամբլներին և մշակել դրանց պահպանության համար անհրաժեշտ գործառույթների ծրագիր: Գործընթացի համար սկզբնակետ կարող է հանդիսանալ սույն աշխատության շրջանակում կազմված Երևանի 1920-1950-ականների բնակելի կառուցապատմանը նվիրված «Փաստագրական նյութերի և տվյալների կատալոգը» (ներառում է հաշվառված 442 կառույցների վերաբերյալ ձեռքբերված 1000-ից ավել գրաֆիկական նյութեր):

14) Աշխատության արդյունքների ընդհանրացումն ապացուցում է, որ բնակելի շինարարության ապագան պետության առջև կանգնած կարևորագույն խնդիրներից մեկն է, և անկախ կառավարման համակարգից, դրա լուծման գործընթացում պետությունը պետք է հանդիսանա գլխավոր դերակատարը: Առանց դրա ընդարձակ սոցիալական խմբերի պահանջներից բխող հասանելի կացարանի զարգացումն անհնար է: Պետական և տեղական ինքնակառավարման համակարգերը պետք է ոչ

միայն աջակցեն մատչելի կացարանի ձևավորմանը, այլ նաև ուղղորդեն բնակելի ճարտարապետության ողջ բազմակողմանի գործընթացը:

- Նշված առաջարկները կյանքի կոչելու համար պահանջվում է գործընթացների իրականացման պատասխանատվությունը դնել Երևանի Քաղաքապետարանի վրա: Կառավարման մարմինների վերահսկողությունը հնարավորություն կտա բնակելի ճարտարապետության ոլորտի զարգացումն իրականացնել ոչ թե գործարարական ծրագրերի նպատակներով, այլ հանրային շահերից բխող պահանջներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

1. Պարզվել է, որ Երևանում բնակելի ֆոնդի ցուցանիշները 1920-1991 թվականներին աճել են Խորհրդային Միության նույն ժամանակաշրջանում զարգացող քաղաքների (Նովոսիբիրսկ, Չելյաբինսկ, Մագնիտոգորսկ, Իժմսկ, Կրասնոյարսկ, Կրասնոդար, Օմսկ) առաջընթացի միջին մակարդակին համապատասխան:

2. Բացահայտվել է, որ Երևանի բնակելի ճարտարապետության մեջ արտահայտվում են եվրոպական քաղաքների զարգացման բնորոշ գծերը, որոնք արտացոլվում են կառուցապատման ձևավորման, գեղարվեստական լուծումների, բնակելի բջջի և տան սանիտարահիգիենիկ պայմանների կատարելագործման գործընթացներում:

3. Հաստատվել է Երևանի գլխավոր հատակագծերի և բնակելի կառուցապատման ոչ լիարժեք փոխկապվածությունը, ինչի հետևանքով կառուցապատման տեմպերը մշտապես գերազանցել են նախատեսված ցուցանիշներին՝ հանգեցնելով սպասարկման համակարգի զարգացման անբավարար մակարդակի (հավելված 1):

4. Ի հայտ է բերվել Երևանի բնակելի ճարտարապետության ձևավորման վրա ազդող ներքին գործոնների կախվածությունը արտաքին գործոններից (բնակելի բջջի կազմակերպումը պայմանավորվում է շենքերի և կառուցապատման լուծումների առանձնահատկություններով):

5. Վեր են հանվել Երևանի բնակելի ճարտարապետության տիպաբանական օրինաչափություններն ըստ կառուցապատման ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումների յուրահատկությունների:

6. Դուրս են բերվել Երևանում բնակելի բջջի կազմակերպման գործընթացում սանիտարահիգիենիկ պայմանների (բնական օդափոխություն և լուսավորություն, կողմնորոշում, օդի ծավալ, սանիտարական տարածքներ) և հարմարավետության մակարդակի (մակերես, ֆունկցիոնալ կառուցվածք, արտաբնակարանային տարածքներ, պատշգամբեր) զարգացման բնութագրերը (հավելված 2):

7. Կատարվել է Երևանի բնակելի ճարտարապետության զարգացման ժամանակագրական փուլերի հետևյալ դասակարգումը (ըստ ձևատեղծման և արտահայտման հատկանիշների)՝

- 1920-1938 թթ. (ՀԽՍՀ-ի կազմավորում, բնակելի շինարարության պետական գործընթացի ծավալում, 1924-ի գլխավոր հատակագիծ, դասական ժառանգության յուրացում և կոնստրուկտիվիզմ),

- 1939-1956 թթ. (1939-ի և 1951-ի գլխավոր հատակագծեր, ազգային և դասական ոճերի վրա հիմնված միասնական գեղարվեստական ուղղություն),
- 1957-1970 թթ. (1957-ին «ԽՍՀՄ-ում բնակելի շինարարության զարգացման» որոշում, զանգվածային բնակելի շինարարության գործընթացի ծավալում),
- 1971-1991 թթ. (1971-ի գլխավոր հատակագիծ, բնակչության կտրուկ աճով պայմանավորված՝ Երևանի խոշորագույն քաղաքների դասում հայտնվելու հանգամանք),
- 1992-ից առ այսօր (<<-ի կազմավորում, պետական բնակելի շինարարության կասեցում, կացարանի ձևավորում անհատ սեփականության պահանջներով):

8. Ապացուցվել է, որ եթե մինչև 1992 թվականը Երևանի բնակելի ճարտարապետությունը ձևավորվել է տեղական պայմանների և պետական կառավարման քաղաքականության ազդեցությամբ, ապա ներկայումս առաջնային նշանակություն են ստացել անհատ սեփականության շահերը:

9. Բացահայտվել են Երևանում նոր սոցիալ-տնտեսական պայմաններում կառուցված բնակելի շենքերի ճարտարապետության դրական (ժամանակակից նյութերի և տեխնոլոգիաների կիրառություն, շինարարության բարձր որակ) և բացասական (քաղաքաշինական, ճարտարապետահատակագծային պահանջների խախտումներ, գեղարվեստական ցածր որակ) կողմերը:

10. Մշակվել են Երևանի բնակելի ճարտարապետության հետագա զարգացման համար գիտականորեն հիմնավորված հետևյալ հանձնարարականները:

- Վարչական շրջանների առանձին տարածքների գոտևորման նախագծերում կառուցապատման էքսիզների փոխարեն շրջանառության դնել կառուցապատման նախագծերի մշակման սկզբունքը, որտեղ կամրագրվեն նախատեսվող կառուցապատման հստակ չափանիշներ (շենքերի հատակագծային ուրվագիծ և չափեր, բարձրություն, հարկայնություն, շենքերի միջև հեռավորություններ):


- Կանոնակարգել բնակելի կառուցապատման նոր գոտիներում հողամասերի ձևավորման չափանիշներն ու տրամադրման սկզբունքները՝ ըստ կառուցապատման նախագծերի (հողամասերի բաժանումն իրականացնել կառուցապատման նախագծի համաձայն):

- Կատարել բնակելի ֆոնդի անձնագրավորում սեյսմակայունության տեսանկյունից՝ դասակարգելով շենքերն ըստ անհրաժեշտ գործառույթներով պայմանավորված խմբերի (պահպանվող, վերակառուցվող, քանդվող):


- Համաչափության բերել գոյություն ունեցող բնակելի կառուցապատման հարկայնությունն ու տարածահատակագծային կառուցվածքը՝ ելնելով անվտանգության, բնակչության խտության և հորինվածքային միասնության պահանջներից (հարկայնության կրճատում կամ ավելացում, կառուցապատման թերի հատվածների լրացում):

- Իրականացնել գոյություն ունեցող բնակելի կառույցների ճակատների հորինվածքային փոփոխություններ և արդիականացում (պատուհանների և բացվածքների նույնականացում, գովազդային տարրերի կանոնավորում, շնչող պատերի սարքավորում, էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործում, ջրհավաքների և ջրահեռացման բարելավում):

- Կազմակերպել գոյություն ունեցող կառուցապատման տանիքների մասնակի վերակառուցում (կառուցապատման մեծ հատվածներով միասնական գեղարվեստական լուծումների ձևավորում, ձեղնահարկերի և տեռասների իրականացում, կանաչապատում, բացվող տանիքների կիրառում, արևային էներգիայի օգտագործման համակարգերի տեղադրում):
- Քաղաքի կերպարի բարելավման նպատակով ներդաշնակել շենքերի ճակատների գունային լուծումները՝ ընդհանուր կառուցապատման մեջ կազմավորելով համահունչ գեղարվեստական ձևավորումներ:
- Վերակառուցել ներթաղամասային տարածքները (կազմակերպել հանգստի գոտիներ, խաղահրապարակներ, կանաչապատում, ավտոկայանատեղեր, տրանսպորտային մոտեցումներ)՝ բակերում տարերայնորեն առաջացած կառույցների ապամոնտաժման արդյունքում ի հայտ եկած մակերեսի կորուստը փոխհատուցելով տանիքների չօգտագործված հատվածների և ստորգետնյա կառուցապատման հաշվին (հավելված 3):
- Բնակիչների կենսագործունեության պայմանների բարելավման նպատակով շենքերի ստորին հարկերում բացառել զարգացած խոհանոցային արտադրությամբ սննդի օբյեկտների տեղադրումը, իսկ հասարակական սպասարկման այլ հիմնարկների համար ապահովել բնակելի հատվածի մուտքերից դուրս, առանձին մոտեցումներ:
- Միակողմանի կողմնորոշման բնակարաններում բնական օդափոխության ապահովման նպատակով նախագծման սանիտարահիգիենիկ պահանջների խախտումներով իրականացված շենքերի ընդհանուր միջանցքներում հնարավորության դեպքում կազմակերպել օդափոխության մեխանիկական կառավարվող հորաններ:
- Միևնույն շինարարական ծախսերի պարագայում ձևավորվող շահույթի էական տարբերությունը չեզոքացնելու համար հարկային քաղաքականության միջոցով կառավարել քաղաքի տարբեր հատվածներում ներդրման և շահույթի հավասարակշռությունը, ինչը թույլ կտա բնակելի շինարարությունը ծավալել քաղաքի զարգացման համար նպատակահարմար ուղղություններով:
- Քաղաքից բացվող համայնապատկերները բարելավելու նպատակով մշակել նախատեսվող կառուցապատման հարկայնության սահմանափակման գոտևորում՝ հիմք ընդունելով Երևանի տարածության աշխարհագրական և տոպոգրաֆիական առանձնահատկությունները (հավելված 4):
- Ճարտարապետության հուշարձանի կարգավիճակ տալ Երևանում 1924-1956 թվականներին կառուցված բնակելի շենքերի անսամբլներին և մշակել դրանց պահպանության համար անհրաժեշտ գործառույթների ծրագիր:
- Սույն հանձնարարականների իրականացման նախապայման պետք է լինի գործընթացների կառավարման ստանձնումը Երևանի Քաղաքապետարանի կողմից, ինչը հնարավորություն կտա բնակելի ճարտարապետության ոլորտի զարգացումն իրականացնել հանրային, այլ ոչ գործարարական շահերի գերակայությամբ:



Հավելված 1: Գլխավոր հատակագծերի և բնակելի կառուցապատման ոչ լիարժեք փոխկապվածությունը:



Հավելված 2: Բնակարանի կազմակերպման գործընթացում սանիտարահիգիենիկ պայմանների և հարմարավետության մակարդակի զարգացման բնութագրերը:

Ներթաղամասային տարածքների վերակառուցում
(Հանրապետության, Տպագրիչների փողոցներով և Վարդանանց փողոցի փակուղով
պարփակված թաղամասի օրինակով)


ներկա իրավիճակ



իրացվող բնակելի և հասարակական տարածքներ - 1520 ք.մ.
իրացվող ավտոտնակներ - 1200 ք.մ.


կառուցվում է
իրացվող
տարածքների
227 %-ին
համարժեք
մակերես

նորամուտ
արտադրվող առարկաներ



տանիքներում լրացվող կառուցապատում - 2100 ք.մ.
ստորգետնյա ավտոկայանատեղեր և սպասարկման օբյեկտներ - 4050 ք.մ.

Հավելված 3: Ներթաղամասային տարածքների վերակառուցում:



Հավելված 4: Կառուցապատման հարկայնության սահմանափման գոտևորում:

1. Ազատյան Կ.Ռ. Երևանում բազմաբնակարան շենքերի ձևավորման նախնական փուլը. բնակելի կառույցների ճարտարապետությունը XX դարի սկզբին // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր II (38). - Երևան, 2010, էջ 29-34:
2. Ազատյան Կ.Ռ. Երևանի բազմաբնակարան շենքերի ճարտարապետությունը զարգացման սկզբնական փուլում (1920-1930թթ.) // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր II (38). - Երևան, 2010, էջ 34-41:
3. Ազատյան Կ.Ռ. Երևանում բազմաբնակարան շենքերի ճարտարապետությունը նախապատերազմյան տարիներին (1930-1940թթ.) // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր III (39). - Երևան, 2010, էջ 3-10:
4. Ազատյան Կ.Ռ. Երևանում բնակելի ճարտարապետության զարգացումը հետպատերազմյան տարիներին (1945-1955թթ.) // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր III (39). - Երևան, 2010, էջ 10-15:
5. Ազատյան Կ.Ռ. Բազմաբնակարան շենքերի ճարտարապետությունը Երևանի կենտրոնական փողոցների կառուցապատման ձևավորման գործընթացում 1945-1955 թվականներին // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր I (40). - Երևան, 2011, էջ 20-31:
6. Ազատյան Կ.Ռ. Անսամբլային լուծումը՝ որպես Երևանում 1920-1955 թվականներին կառուցված բնակելի շենքերի ճարտարապետության հիմնական բնորոշ հատկանիշ // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր I (40). - Երևան, 2011, էջ 32-40:
7. Ազատյան Կ.Ռ. Քաղաքային կառուցվածքում բնակելի կառուցապատման կազմակերպման փորձը XX դարի սկզբին // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր IV (43). - Երևան, 2011, էջ 6-13:
8. Ազատյան Կ.Ռ. Բնակելի կառուցապատման հորինվածքային խնդիրները քաղաքային համալիրներում // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր IV (43). - Երևան, 2011, էջ 14-20:
9. Ազատյան Կ.Ռ. Երևանում 1920-1955 թթ. կառուցված բնակելի շենքերի ծավալատարածական և հորինվածքային լուծումների առանձնահատկությունները // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր II (45). - Երևան, 2012, էջ 3-11:
10. Ազատյան Կ.Ռ. Բնակելի շենքերի ճարտարապետաքաղաքաշինական խնդիրները Երևանի XX դարի առաջին կեսի կառուցապատման մեջ // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր III (46). - Երևան, 2012, էջ 3-15:
11. Ազատյան Կ.Ռ. Երևանում 20-րդ դարի առաջին կեսին կառուցված բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային լուծումների առանձնահատկությունները // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր IV (47). - Երևան, 2012, էջ 3-15:
12. Ազատյան Կ.Ռ. Ժամանակի գործոնը քաղաքային կառուցվածքում // ԵՃՇՊՀ տեղեկագիր, հատոր 6 (32). - Երևան, 2012, էջ 88-96:
13. Ազատյան Կ.Ռ. XX դարի առաջին տասնամյակների բնակելի կառուցապատման արդիականացման փորձը // ՀՇՄ տեղեկագիր (գիտ. աշխատությունների ժողովածու), հատոր 1-2 (185-186). - Երևան, 2013, էջ 53-63:
14. Ազատյան Կ.Ռ. Բնակարանների հատակագծային և ֆունկցիոնալ լուծումները Երևանում բազմաբնակարան շենքերի ճարտարապետության կազմավորման ժամանակաշրջանում // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր I (48). - Երևան, 2013, էջ 3-18:
15. Ազատյան Կ.Ռ. Բազմաֆունկցիոնալ կառուցվածքը որպես Երևանում 1930-1955 թվականներին կառուցված բնակելի շենքերի ճարտարապետական կազմավորման բնորոշ առանձնահատկություն // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր II (49). - Երևան, 2013, էջ 3-18:
16. Ազատյան Կ.Ռ. Քաղաքային միջավայրի կազմակերպման գեղագիտական խնդիրները Երևանի XX դարի առաջին կեսի բնակելի ճարտարապետության մեջ //

- ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր III (50). - Երևան, 2013, էջ 3-20:
17. Ռաշիդյան Գ.Հ., Ազատյան Կ.Ռ. Երևանում զանգվածային կառուցապատման նոր բնակելի շրջանների ճարտարապետության առանձնահատկությունները // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, հատոր IV (51). - Երևան, 2013, էջ 47-57:
18. Ազատյան Կ.Ռ. Բնակելի շենքերի ճարտարապետությունը քաղաքի կերպարի ձևավորման գործընթացում // ԵՃՇՊՀ տեղեկագիր, հատոր 1 (33). - Երևան, 2013, էջ 24-30:
19. Ազատյան Կ.Ռ. Տիպային նախագծման զարգացումը Երևանում զանգվածային բնակելի շինարարության ձևավորման ժամանակաշրջանում (1960-ականներ) // ԵՃՇՊՀ տեղեկագիր, հատոր 6 (38). - Երևան, 2013, էջ 73-78:
20. Ռաշիդյան Գ.Հ., Ազատյան Կ.Ռ., Ենգոյան Ա.Ռ. Երևանում բնակելի ճարտարապետության նոր մոտեցումները 1970-ական թվականներին // ՀՃԱ լրաբեր (գիտատեխ. հոդվածների ժողովածու), հատոր 10 N 4. - Երևան, 2013, էջ 699-703:
21. Ազատյան Կ.Ռ., Ենգոյան Ա.Ռ., Խանոյան Կ.Ռ. Երևանի բնակելի կառուցապատման ճարտարապետական կերպարի խնդիրները զանգվածային շինարարության առաջին տասնամյակում (1960-ականներ) // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, հատոր II (53). - Երևան, 2014, էջ 3-10:
22. Ազատյան Կ.Ռ., Ենգոյան Ա.Ռ., Խանոյան Կ.Ռ. Երևանում բնակելի շենքերի տիպային նախագծման մեթոդի կատարելագործումն ու բյուկ-սելցիոն համակարգի ներդրումը 1970-ականներին // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, հատոր III (54). - Երևան, 2014, էջ 3-12:
23. Азатыан К.Р., Енгоян А.Р. Архитектура центра Еревана в прошлом и в настоящем // Научно-технический журнал. ПГУАС, № 3 (20). - Пенза, 2014, с. 137-144.
24. Азатыан К.Р., Енгоян А.Р. Проблемы интеграции старого и нового в процессе развития городского пространства // Вестник МГСУ, № 6. - М.: 2014, с. 7-16.
25. Рашидян Г.Г., Енгоян А.Р., Азатыан К.Р. Задачи современного этапа развития жилищной архитектуры в Армении // Междлвнаропный научно-исследовательский журнал. № 12 (31), Часть 2. - Екатеринбург, 2014, с. 111-114, <http://research-journal.org/>.
26. Енгоян А.Р., Азатыан К.Р. Архитектурно-градостроительные проблемы жилой застройки центра Еревана в настоящем // Вестник СГТУ, № 3 (76). - Саратов, 2014, с. 114-119.
27. Енгоян А.Р., Азатыан К.Р. Пути развития социально доступного жилища в Армении на современном этапе // Научно-технический журнал. ПГУАС, № 1 (22). - Пенза, 2015, с. 142-147.
28. Ազատյան Կ.Ռ. Բնակելի բջջի զարգացման հիմնական փուլերը Երևանի վերջին հարյուրամյակի ճարտարապետության մեջ // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, հատոր IV (59). - Երևան, 2015, էջ 3-13:
29. Азатыан К.Р. Жилищная архитектура Еревана в XX в. Выявление основных этапов развития планировочной структуры жилой ячейки // Вестник МГСУ, № 5, - М.: 2016 с. 18-27.
30. Азатыан К.Р. Жилищная архитектура Еревана в XX в. Многофункциональность в структуре жилых домов первой половины столетия // Вестник МГСУ, Т. 12, Вып. 9 (108). - М.: 2017, с. 962-970.
31. Ազատյան Կ.Ռ. Երևանի բնակելի ճարտարապետությունը XX դարում. 1920-50-ականների կառուցապատման արդիականացման խնդիրները // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, հատոր IV (67). - Երևան, 2017, էջ 3-13:
32. Азатыан К.Р. Жилищная архитектура Еревана в XX в. Основные этапы развития процесса организации дворового пространства // Вестник МГСУ, Т. 13, Вып. 3 (114). - М.: 2018, с. 301-308.

АЗАТЯН КАРЕН РУБЕНОВИЧ
РАЗВИТИЕ ЖИЛИЩНОЙ АРХИТЕКТУРЫ ЕРЕВАНА В XX ВЕКЕ В ПРОСТРАНСТВЕ И ВРЕМЕНИ
РЕЗЮМЕ

Жилище является главным условием жизнедеятельности человека. Обеспечение жилья - это важнейшая социальная задача каждого государства. В то же время, жилище является постоянным фактором формирования городской структуры, а жилищная архитектура играет важную роль в процессе развития градостроительства. Таким образом, формирование архитектуры жилья – это сложный процесс, связанный с разными требованиями времени, в котором отражаются многосторонние функциональные, художественные, социальные, экономические факторы.

Однако, время ставит свою печать на архитектуру города. Город подвергается изменениям, преобразуется также жилая застройка. Прогресс общества периодически предъявляет новые требования к жилой среде, призывая к новым решениям устройства жилья. Ввиду этого, жилищная архитектура постоянно подлежит регулярному исследованию, анализу и определению перспективных путей развития.

В этом контексте не исключение также жилищная архитектура Еревана. В течении последних десятилетий, одновременно с формированием нового политического и социально-экономического строя в Армении, преобразилась также сфера жилищного строительства. Бурное развитие застройки в настоящем создает множество сложных и трудно разрешимых проблем в градостроительной структуре города, и первым шагом на пути решения этих задач должно быть переосмысление опыта прошлого. Сегодня, имея перед собой опыт прошлого столетия, есть возможности разностороннего изучения, анализа и оценки особенностей пройденного пути. Это поможет решению проблем современного этапа и поиску путей развития в перспективе. Данная работа посвящена исследованию вышеуказанных задач.

В результате исследования определены следующие **выводы**.

1. Выяснилось, что показатели роста жилого фонда в Ереване в течении 1920-1991 годов соответствуют среднему уровню роста жилого фонда других городов СССР, развивающихся в тех же годах (Новосибирск, Челябинск, Магнитогорск, Ижевск, Красноярск, Краснодар, Омск).
2. Выявлено, что в жилищной архитектуре Еревана проявляются характерные черты развития европейских городов, которые отражаются в процессах формирования застройки и художественных решений, усовершенствовании жилой ячейки и санитарно-гигиенических условий жилища.
3. Обнаружена недостаточная взаимосвязь генеральных планов Еревана и жилой застройки, в следствии чего темпы застройки всегда превышали предусмотренные показатели и привели к недостаточному уровню развития системы обслуживания.
4. Установлена зависимость внутренних факторов, воздействующих на формирование жилищной архитектуры Еревана от внешних.
5. Выведены типологические закономерности жилищной архитектуры Еревана, связанные с особенностями объемно-пространственных и архитектурно-планировочных решений застройки.
6. Определены характеристики развития санитарно-гигиенических условий (естественное освещение и проветривание, ориентация, объем воздуха, санитарные помещения) и уровня комфорта (площадь, функциональная структура, внеквартирные помещения, балконы) в процессе организации жилой ячейки.
7. Проведена классификация хронологических периодов развития жилищной архитектуры Еревана (1920-1938 гг., 1939-1956 гг., 1957-1970 гг., 1971-1991 гг., 1992-до наших дней).
8. Доказано, что если до 1992 года жилищная архитектура Еревана формировалась под воздействием местных условий и государственного управления, то в настоящем главное значение приобрели интересы частной собственности.

9. Выявлены положительные и отрицательные особенности архитектуры жилых зданий, сооруженных при новых социально-экономических условиях.

10. Разработаны следующие научно-обоснованные **рекомендации** развития жилищной архитектуры Еревана в будущем.

- В проектах зонирования административных районов в место эскизов застройки внедрять принцип разработки проектов застройки, с фиксацией конкретных параметров предусмотренной застройки (планировочные контуры и размеры сооружений, высота, этажность, расстояние между зданиями).

- Регулировать параметры образования и принципы предоставления земельных участков в новых зонах жилой застройки по проектам застройки (разделение земельных участков выполнять в согласии с проектом застройки).

- Проводить паспортизацию жилого фонда с точки зрения сейсмостойкости, классифицировав сооружения по группам, обусловленными необходимыми мероприятиями (сохранение, реконструкция, снос).

- Приводить к соразмерности этажность и пространственно-планировочную структуру существующей жилой застройки, исходя из требований безопасности, плотности населения и композиционного единства (сокращение или дополнение этажности, заполнение неоконченных участков застройки).

- Осуществлять композиционные изменения и модернизацию фасадов существующих жилых сооружений (идентификация окон и проемов, регулирование рекламных элементов и водоотведения, устройство дышащих стен).

- Организовать частичную реконструкцию кровли существующей застройки (целостные решения больших участков застройки, мансарды и террасы, озеленение, открывающиеся крыши, системы использования солнечной энергии).

- С целью улучшения образа города, согласовывать цветовые решения фасадов зданий, образуя гармоничное художественное оформление застройки в целом.

- Возмещая площадь стихийно возникших во дворах сооружений за счет застройки неосуществленных участков крыш и подземного пространства, проводить реконструкции внутриквартальных территорий (благоустройство, зоны отдыха, автостоянки, транспортные подходы, озеленение).

- Для улучшения условий жизнедеятельности населения, в нижних этажах жилых зданий исключать размещение пищевых объектов с развитым производственным хозяйством, а для других предприятий общественного обслуживания обеспечивать отдельные подходы за пределами жилых подъездов.

- В пределах общих коридоров зданий, построенных с нарушениями санитарно-гигиенических требований, при возможности устраивать механически управляемые вентиляционные шахты, с целью обеспечения естественной вентиляции в квартирах с односторонней ориентацией.

- В целях устранения существенной разницы в прибыли при аналогичных строительных расходах, с помощью налоговой политики регулировать равновесие инвестиций и прибыли в разных частях города, что позволит направить жилищное строительство в целесообразные зоны развития города.

- Для преобразования открывающихся панорам, разработать зонирование ограничения этажности планируемой застройки на основе географических и топографических особенностей Еревана.

- Присвоить статус памятников архитектуры ансамблям жилых домов Еревана, сооруженных в 1924-1956 годах и разработать программу необходимых действий по их охране.

- Необходимым условием реализации данных рекомендаций должно быть возложение ответственности управления процессами на мэрию Еревана, что даст возможность в области развития жилищной архитектуры установить приоритет общественных, а не деловых интересов.

KAREN RUBEN AZATYAN
THE EVOLUTION OF THE 20TH CENTURY RESIDENTIAL ARCHITECTURE OF
YEREVAN IN SPACE AND TIME
ABSTRACT

Housing is the chief determinant of human activity. The provision of housing is the most important social issue in a state. At the same time, housing plays a constant role in the formation of urban structure, and the residential architecture has always played a key role in the process of urban development. Thus, the formation of residential architecture is a complex process relating to a variety of demands of a particular era that deals with a number of factors - functional, aesthetic, social, and economic.

Nevertheless, time influences urban architecture. The city undergoes changes, and the residential development also changes. The progress of society periodically makes new demands on the residential environment calling for new solutions for housing. Therefore, residential architecture is constantly subject to research, analysis and prediction of development prospects.

In this context, the housing architecture of Yerevan is no exception. In the recent decades, in Armenia, the residential construction has changed parallel with the formation of a new political and socio-economic system. The current the development of construction creates a series of difficult problems for the urban structure of Yerevan, and the first step in the solution of these problems must be the reconceptualization of the past experience. Today, in view of the experience of the last century, there are many opportunities for a comprehensive study, analysis, and evaluation of the features of the past practice. This will help to solve the problems of the current stage and find ways to develop in the future. This study is devoted to the investigation of the above-mentioned problems.

In the result of the study, the following **conclusions** are made.

1. It was found out that the growth rates of the housing stock in Yerevan in the period 1920-1991 correspond to the average level of other cities of the USSR developing in the same years (Novosibirsk, Chelyabinsk, Magnitogorsk, Izhevsk, Krasnoyarsk, Krasnodar, Omsk).
2. It was revealed that in the housing architecture of Yerevan the characteristic features of the development of European cities are manifested, which are reflected in the formation of the development and the artistic solutions, improvement of the housing cell and sanitary and hygienic conditions of the dwelling.
3. An inappropriate interconnection between the general plans of Yerevan and residential development has been discovered, as a result of which the pace of construction has always exceeded the intended standards and led to an inadequate level of development of the service system.
4. The dependence of internal factors on external factors, which influence the formation of the housing architecture of Yerevan, is established.
5. The typological regularities of the residential architecture of Yerevan are revealed according to the characteristics of volumetric-spatial and architectural-planning solutions of the development.
6. The characteristics of the development of sanitary and hygienic conditions (natural illumination and ventilation, orientation, air volume, sanitary facilities) and the level of comfort (area, functional structure, non-residential premises, balconies) in the process of organizing a residential cell are determined.
7. The classification of the chronological periods of the development of the residential architecture of Yerevan (1920-1938, 1939-1956, 1957-1970, 1971-1991, 1992- up to now) is carried out.
8. It is proved that if before 1992 the residential architecture of Yerevan was formed under the influence of local conditions and state administration, in the present, the interests of private property acquired the main importance.

9. Positive and negative features of the architecture of residential buildings constructed under new socio-economic conditions have been determined.

10. The following scientifically grounded **recommendations** for the further development of the residential architecture of Yerevan have been developed.

- In the projects of zoning of administrative districts, introduce the principle of the design of development projects, instead of the existing development sketches, with a fixed set of specific parameters for the planned development (planning contours and sizes, height, number of levels of structures, distance between buildings).
- Regulate the parameters of formation and the principles of granting of plots of land in new residential areas according to the development projects (the division of plots of land is to comply with the development project).
- Carry out the certification of the housing stock from the standpoint of seismic resistance classifying the buildings into groups conditioned by the necessary activities (preservation, reconstruction, demolition).
- Bring to proportionality the number of storeys and the spatial planning structure of the existing residential development, proceeding from the requirements of security, population density and compositional unity (reduction or addition of storeys, filling of unfinished development sites).
- Implement compositional changes and modernization of the facades of existing residential buildings (identification of windows and openings, regulation of advertising elements and water disposal, construction of breathable walls).
- Conduct a partial reconstruction of the roofs of existing development (holistic solutions for large zones of development, mansards and terraces, landscaping, opening roofs, solar energy systems).
- In order to improve the image of the city, coordinate the color solutions of the facades of buildings, forming a harmonious artistic design of the development as a whole.
- Implement the reconstruction of intraquarter territories, refunding the area of spontaneously arisen in the yards of buildings due to the construction of unrealized sections of roofs and underground space (accomplishment, recreation areas, parking, transport approaches, landscaping).
- In order to improve the living conditions of the population, in the lower levels of residential buildings, prohibit the placement of advanced food production facilities, and for other public service enterprises provide separate approaches outside the residential entrances.
- In the corridors inside residential buildings that are constructed with violations of sanitary and hygienic requirements, arrange mechanically controlled ventilation shafts to ensure natural ventilation in apartments with one-sided orientation.
- In order to eliminate a significant difference in profits in the events of the same construction expenses, regulate the balance of investment and profit in different parts of the city through tax policy, which will orient the housing construction to the appropriate directions of urban development.
- To improve the opening panoramas, develop a zoning limitation of the number of storeys of the planned development on the basis of geographical and topographic features of Yerevan.
- Assign the status of the monuments of architecture to the ensembles of Yerevan's residential buildings built in 1924-1956 and develop a program of necessary actions for their preservation.
- A necessary condition for the implementation of these recommendations should be the imposition of the responsibility of the processes management on the municipality of Yerevan, which will enable in the development of housing architecture to establish a priority of public, not business interests.

